

ՄԵՐ ՊԼԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

Ժամանակակից աշխարհում, ու թերեւս, բոլոր ժամանակներում, պատմությունը եւ նրա խորհրդանիշները (դեմքեր եւ իրադարձություններ, որոնք դառնում կամ որակվում են պատմական) ենթակա են գաղափարախոսական կամ աշխարհայացքային չափանիշների:

Օրինակ, մարքսիստ-տեսաբանները մարդկության պատմությունը գնահատում էին դասակարգային պայքարի տեսանկյունից՝ համայնավարական-ապադասակարգային հասարակարգը համարելով պատմության վերջնական նպատակ:

Այսօրվա գլոբալիստները, նոր գաղափարախոսությունների ի հայտ գալու առումով՝ պատմությունը համարում են «ավարտված», իսկ արդի ազատական-ժողովրդավարությունը՝ իբրեւ ամենավերջին գաղափարախոսություն, որի գլոբալ հաղթարշավով մարդկությունը «կապագաղափարականացվի» եւ կմտածի միայն գիտատեխնիկական խնդիրների ու ընկերային կյանքի անընդհատ բարելավման ուղղությամբ:

Թե որքանով են համայնավարությունը կամ ազատական-ժողովրդավարությունը պատմության նպատակ կամ «ավարտ», կախված է այն արժեհամակարգի ընտրությունից, որով արժեւորվում է պատմությունը: Իսկ պատմության արժեւորումը որոշակի գաղափարախոսության տեսակետից ոչ միայն նոր բան չէ, այլեւ գրեթե «օրինաչափ» է:

Այս առումով, *մեր պատմությունն՝ իբրեւ Հայ ոգու անցած եւ անցնելիք հետագիծ, իբրեւ մեր անցյալի ու ապագայի անխզելի միասնություն, կարիք ունի վերարժեւորման, վերահիմաստավորման:* Այն մի տեսակ դադարել է մեզ համար ինքնաճանաչումի, ինքնագորացումի աղբյուր լինելուց, եւ հերոսն ու դավաճանը, հաղթանակներն ու պարտությունները մեզանում կարծես նույնարժեք են դարձել: Դրա փոխարեն՝ «ապագաղափարականացված» եւ «ազատ» հասարակության ճարտարապետները մեզ են մատուցում պատմության իրենց վարկածները եւ խորհրդանիշները:

«Քանի դեռ մեր ժողովրդին տրված չէ իր պատմության իմաստասիրությունը՝ նա պիտի չկարողանա օգտվել նրանից,– գրել է մի նշանավոր մտածող՝ ավելացնելով,– հայությանը ճակատագրական ծառայություն մատուցած կլինի նա, ով կհիմաստասիրի նրա պատմությունը»:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ **Թամարա Վարդանյան**

Ազգայնականության ժամանակակից տեսաբանները «ազգ» եւ «ազգայնականություն» եզրերին մոտենում են տարբեր, երբեմն գրեթե հակադիր եւ իրարամերժ դիրքերից:

Կարելի է ընդհանուր մոտեցումները բաժանել երկու հիմնական ուղղությունների: Առաջինները ազգը եւ ազգայնականությունը համարում են արհեստական եւ ժամանակավոր, երկրորդները՝ բնական եւ հավիտենական երեւոյթ:

Ըստ առաջինների մոտեցման, ազգն առաջացել է, քանի որ այն անհրաժեշտ էր կապիտալիզմի արդյունավետ զարգացմանը: Նրանք գտնում են, որ մինչեւ կապիտալիզմի զարգացումն ազգեր չեն եղել, որ դրանք ժամանակավոր երեւոյթ են եւ եթե կապիտալիստական տնտեսությանն անհրաժեշտ չլինեն, ապա կվերանան:

Ժամանակակից հայտնի տեսաբան, ազգությամբ հրեա, բրիտանական ուսումնասիրող Էռնեստ Գելները ազգայնականության առաջացումը պայմանավորում է արդյունաբերական հեղաշրջմամբ: Նա ազգի առաջացումը ներկայացնում է որպես պետության կողմից իրականացվող նպատակաուղղված գործունեության արդյունք (հատկապես լուսավորության եւ կրթության բնագավառում): Ըստ Գելների՝ ազգը ժամանակակից կոնստրուկցիա է, իսկ ազգայնականությունը՝ քաղաքական ծրագիր:

Այս խմբի ուսումնասիրողների մոտեցումների հիմքում ընկած է Գելների դեռեւս 1964թ. արտահայտած այն կարծիքը, որ ազգը հորինվել է ազգայնականների կողմից: Այսպիսով, նրանք ազգի ձեւավորման գործընթացը դիտում են որպես մարդու կողմից համապատասխան մեկնաբանության արդյունք: Այս մոտեցումն այսօր շատ տարածված է Արեւմուտքում:

Եթե Գելների համար ազգը հորինված է ազգայնականների կողմից, ապա, ըստ Բենեդիկտ Անդերսոնի, «ազգը մտածված քաղաքական հանրոյթ է, որը ծնվել է ինտելեկտուալների ուղեղում եւ նրանց կողմից էլ ներարկվել հասարակության գիտակցության մեջ» (Imagined communities— «Պատկերացրած հանրություն»):

Ըստ երկրորդ խմբի ներկայացուցիչների, ազգը նոր երեւոյթ չէ, այն էթնիկ էության բնական շարունակությունն է: Հեռավոր պատմական անցյալից սկսած՝ ամեն անհատ ունեցել է էթնիկ պատկանելություն: Ժամանակակից ազգերի արմատներն անհրաժեշտ է փնտրել պատմական անցյալում:

Ըստ այս ուղղության խոշոր տեսաբան Է.Սմիթի, ազգը իդենտիֆիկացվում (նույնականացվում) է վեց հիմնական բաղադրիչներով.

1. ընդհանուր անուն,
2. ծագման ընդհանուր միջ (առասպել),
3. ընդհանուր պատմություն,
4. ընդհանուր մշակույթ,
5. կոնկրետ եւ ընդհանուր տարածքի հետ ասոցացում,
6. միասնության զգացում:

Առհասարակ, այս խմբի ուսումնասիրողները գտնում են, որ էթնիկությունն առաջանում է մեխանիկորեն՝ այնպիսի օբյեկտիվ ցուցիչների հիմքով, որոնցից են լեզուն, ֆիզիկական դիմագիծը, կրոնը, ընդհանուր պատմական անցյալը, ավանդական կենցաղային եւ վարքաբանական մշակույթի առանձնահատկությունները: Մինչդեռ, Գելները եւ իր կողմնակիցներն այս օբյեկտիվ ցուցիչները համարում են ընդամենը հիմք՝ իրականությանը տրվող այս կամ այն մեկնաբանության համար:

Ի դեպ, որոշ տեսաբաններ փորձում են հաշտեցնել այս երկու ուղղությունները: Այսպես. 1993թ. Ջոն Հոլն իր «Ազգայնականություն. դասակարգում եւ բացատրություն» հոդվածում նշում է, որ «անհնար է ազգայնականության ունիվերսալ տեսության գոյությունը: Պետք է լինեն տարբեր հայեցակարգեր, քանի որ անցյալը բազմազան է»: Նա գտնում է, որ «ազգայնականություն» եզրը ներառում է բազմաթիվ երեւոյթներ եւ գործընթացներ, որոնք տարբերակվում են ժամանակից եւ տեղից կախված, հետեւաբար անհրաժեշտ է իրավիճակային վերլուծություն:

Պետք է ասել, որ XXդ. վերջին քառորդում հիմնականում տիրապետում էր այն տեսակետը, թե ազգերը, ազգային-ազատագրական շարժումներն ու դրանց հիմքում ընկած ազգայնական գաղափարախոսություններն ապակայունացման եւ հակամարտությունների աղբյուր են՝ «կաթսա, որից հաճախ պատերազմներ են ժայթքում»:

Վերջին շրջանում նույնպես քաղաքագետների, հասարակագետների

շրջանում աշխույժ քննարկումներ եւ բանավեճեր են ընթանում ազգայնականության որակման շուրջ: Մի կողմից՝ արդարացի է համարվում իրենց մշակույթը, լեզուն, ինքնությունը պահպանելու մարդկանց բնական ձգտումը, մյուս կողմից՝ այս բնական մղումը հաճախ վերածվում է սեփական ազգի գերարժեւորման, որը հանգեցնում է անհավասարության եւ խտրականության: Թերեւս, այստեղ է ազգայնականության եւ ազգայնամոլության սահմանը:

Ազգայնականությանը բնորոշ է անդրադարձը անցյալին, նախնյաց սովորույթներին, արմատներին, ինչը հաճախ ազատականների կողմից ընկալվում է որպէս հասարակության արդիականացման գործընթացների խոչընդոտ:

Բազմաթիվ հետազոտողներ ազգը համարում են սոցիալական համաձայնության լավագույն մոդել, որի ներսում սոցիալական հակամարտությունը բնականորեն հասցված է նվազագույնի:

Ամերիկացի ճանաչված սոցիոլոգ, պրոֆեսոր Լ.Քրիզբերգն առանձնացնում է էթնիկ ազգայնականության դրական կողմերը եւ նշում, որ *«էթնիկ համերաշխությունը քաղաքացիական հասարակության հաստատման ու պահպանման աղբյուրներից մեկն է»:*

Նույն դիրքորոշումն ունի ազգայնականության բրիտանացի ժամանակակից ուսումնասիրող Անատոլ Լիվենը: Նա, կարելուրեւ ստուտեսական զարգացման համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների առկայությունը, նշում է. *«Շատ հաճախ կարելուր ներքին պայմանների քաղաքացիներից է միատարր ազգայնական քաղաքական ընտրանու առկայությունը, որը պետք է ունենա հզոր ազգայնական զգացումներ, ազգային ինքնություն եւ կարողանա այդ զգացումները հաջողությամբ ներարկել իր ժողովրդին: Եթե ընտրանուն դա հաջողվում է, հնարավոր է դառնում ցավոտ տնտեսական բարեփոխումների անցկացումը, իսկ ժողովուրդն իրեն վստահում է, քանի որ ազգայնականությունը նույն ազդեցությունն ունի, ինչը եւ կրոնը կամ սոցիալիզմը: Հասարակությանը հնարավորություն է ընձեռնվում մտածել առավել բարձր նպատակների, ոչ թե նեղ անձնական շահերի մասին, եւ նա պատրաստ է լինում զոհաբերությունների հանուն ընդհանուր բարեկեցության»:*

Ներկայումս որոշ ամերիկյան հեղինակներ (Բ.Շայֆեր, Լ.Դոուբու, Ռ.Էմերսոն, Ռ.Ստրաուս-Յուպե) գտնում են, որ ազգայնական լինել՝ նշանակում է լինել հայրենիքի հանդեպ պարտքի զգացում ունեցող եւ հայրենիքը սիրող քաղաքացի: Ա.Լիվենը նշում է, որ ընդհանրապես

«ազգայնականի», «հայրենասերի» եւ «ազգայնամոլի» միջեւ բաժանումն արհեստական է. այն գործիչը, որը Ֆրանսիական հեղափոխությունից հետո համարվում էր «հայրենասեր», այսօր կարող է անվանվել «ազգայնական»:

Որպես ազգայնականության հիմնական բնորոշիչ՝ մի շարք հեղինակներ (ամերիկյան՝ Յ.Կոն, Յեյես, Ջ.Սնայդեր, Ռ.Էմերսոն, ֆրանսիացի՝ Ժիրարդո, գերմանացի՝ Լեյբերգ) առաջին հերթին նշում են անձի ծայրահեղ նվիրվածությունն ազգային հանրության, ազգային պետության ընկալումը որպես հասարակական կյանքի կազմակերպման իդեալական մոդել: Նրանք գտնում են, որ ազգայնականն իր գործունեությամբ նպաստում է ազգային պետության զարգացմանն ու բարգավաճմանը:

Այսօր ազգայնականությունն իր հզորությամբ չի զիջում ազատականությանն ու ժողովրդավարությանը: Մի շարք ուսումնասիրողներ այն համարում են ժամանակակից աշխարհի հիմնական գլոբալ գաղափարախոսություններից:

* * *

Տարբեր ազգերի մոտ ազգայնականության հիմնաքարը կարող է տարբեր բովանդակություն, իսկ դրսևորումների առումով՝ մի քանի հարթություններ ունենալ: Այն կարող է խարսխված լինել թե՛ էթնիկությանը, թե՛ պետականությանը, թե՛ կրոնին կամ քաղաքակրթական այլ բաղադրիչներին եւ այլն:

Այսպես, ամերիկյան ազգայնականությունն ունի քաղաքացիական պետական բովանդակություն: Լինել ամերիկացի՝ առաջին հերթին նշանակում է ընդունել օրենքի գերակայությունն ու անհատականության սկզբունքը: Ռուսական ազգայնականությունը ոչ այնքան էթնիկության վրա է հիմնված, որքան ռուսական կայսրության հզորության, ուղղափառության, համաշխարհային քաղաքականության մեջ Ռուսաստանի հատուկ դիրքի, «ռուս մեծ ժողովրդի» կերպարի: Գերմանականն ունի առավել էթնիկ բաղադրիչներ՝ զուգակցված համաշխարհային առաքելության գաղափարով: Ֆրանսիայում կա հանրապետական ազգայնականություն, որի հիմքում ընկած են Ֆրանսիական հեղափոխության արժեքները, բայց միաժամանակ առկա է նաեւ էթնիկության վրա հիմնված ազգայնականություն, որն արտահայտվում է Լը Պենի եւ նրա «Ազգային ճակատի» ազգայնականությամբ եւ այլն:

Ըստ հայ ազգայնականության տեսաբանների, հայ տեսակը ներառում է մի շարք ընդհանրական բաղադրիչներ, որոնցով ամբողջականանում է ազգը: Այսպես, Լեւոն Շանթն իր «Ի՞նչ է ազգությունը» ուսումնասիրությունում առանձնացնում է ազգի գոյացման, նրա զարգացման, կերպավորման եւ հատկորոշման հետեւյալ չորս հիմնական գործոնները՝ ծագումը, հայրենիքը, ֆիզիկական եւ հոգեկան կազմը, անցյալը: Այս գործոնները Լ.Շանթն անվանում է հիմնական-բնական. դրանցով պայմանավորված են եւս չորս գործոններ, որոնք ստեղծագործական-կուլտուրական են՝ լեզուն, կրոնը, պետությունը, արվեստը: Ահա այս երկու խումբ բաղադրիչների (հիմնական-բնական եւ ստեղծագործական-կուլտուրական) համադրությամբ է բնորոշվում ազգը եւ կազմում մեկ ամբողջական միավոր:

Իր «Ազգ եւ Չայրենիք» ուսումնասիրության մեջ Չովհաննես Քաջազնունին եւս ազգը բնորոշում է իբրեւ նույն բաղադրիչների (ցեղ, լեզու, դավանանք, պետություն, պատմական անցյալ, աշխարհագրական միություն, ընդհանուր կենցաղ, ինքնագիտակցություն) հանրագումար:

Այսպիսով, հայ ազգայնականության հիմքը տեսակի ինքնատիպությունն է՝ իր որակների ամբողջությամբ: Ըստ այդմ, հայկական ազգայնականությունն իր դրսեւորումներով ուղղված է բոլոր այն երեւույթների դեմ, որոնք վտանգում են հայ տեսակի գոյությունը:

Չաճախ օտար ուսումնասիրողները հայերի ազգայնականությունը բնութագրում են որպես հակաթուրքական եւ դրանով սահմանափակում այն: Այս ընկալումը նեղ է, քանի որ հակաթուրքականությունը արդի հայ ազգայնականության դրսեւորումներից մեկն է միայն, միգուցե ամենացայտունը (դա բնական է, քանի որ անմիջական վտանգ է հայերի գոյությանը, եւ քանի դեռ այդ վտանգը պահպանվում է, իսկ հայրենի հողերի վերամիավորումը չի ավարտվել, հայոց ազգայնականությունը կլինի հակաթուրքական): Բայց այն չի կարող հանդիսանալ հայկական ազգայնականության բովանդակությունը՝ հիմնաքարը: Մերը «հանուն» է, ոչ թե «ընդդեմ», այսինքն՝ «հանուն մեր տեսակի պահպանման», ոչ թե «ընդդեմ թուրքի կամ այլոց»:

Օրինակ, ուկրաինական, վրացական ազգայնականությունների հակառուսական ուղղվածությունը (այսինքն՝ «պայքարն ընդդեմ») նրանց ինքնամոռաց մղեց դեպի Արեւմուտք, ինչն, անկասկած, նոր սպառնալիքներ է առաջադրելու իրենց ազգային ինքնությանը: Այս վերափոխումները

հնարավոր է, որ հետագայում նոր երանգներ հաղորդեն ուկրաինական, վրացական ազգայնականություններին:

Ներկայիս հայ իրականության մեջ ստեղծվել է մի վիճակ, երբ քաղաքական գործիչների այն թելը, որը դեմ է հակաթուրքականությանը, ընկնում է մեկ այլ ծայրահեղության մեջ՝ գրեթե բթացնելով մեր ինքնապահպանման բնագոյը: Եթե քննադատվի հակաթուրքականությունը, բայց փոխարենը մատնանշվեն այլ սպառնալիքներ, որոնք բխում են, ասենք, օտար արժեքների ներմուծման գործընթացներից, կնշանակի՝ գաղափարական այս թելը հստակ հաշվել է մեր ազգին սպառնացող վտանգները եւ գերակա է համարել ոչ թե թուրքական սպառնալիքը, այլ մեկ ուրիշը...

Ինչեւէ, մեր համոզմամբ, հայ իրականությունում կարող են լինել ազգայնականության դրսեւորման մի քանի հարթություններ կամ ուղղվածություններ, բայց մեկ հիմք՝ հայ տեսակի հարատեւումն իր հայրենիքում:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԱԶԳԻ ԵՒ ԴԱԲԱՆԱՆՔԻ ՄԱՍԻՆ **Նիկոլ Աղբալեան**

Ցրած ենք իրարից հեռու, գաղթաշխարհի մէջ, տարբեր մշակոյթների միջավայրում, բայց ունինք աւելի կամ նւազ գիտակցութիւն մեր ազգային ուրոյնութեան: Շատերը հայ լուսաւորչական են, ուրիշները կաթոլիկ, ոմանք բողոքական, բայց ամենքը աւելի կամ նւազ չափով հայ են զգում իրանց: Այս զգացումը ամէն օր շեշտւում է հակադրութեամբը այն միջավայրի, ուր ապրում ենք: Հալածանք թէ պաշտպանութիւն միշտ նկատի ունեն հայը, որով նպաստում են մեր զանգւածների ազգային գիտակցութեան պահպանումին: Օտարի վերաբերումը շեշտւում է մեր ուրոյնութիւնը, առանց սակայն նպաստելու նրա զարգացման եւ պայծառացման: Այս աշխատանքը մենք ինքներս պիտի կատարենք: Օտարին հակադրելով՝ մենք ամէն օր զգում ենք թէ հայ ենք, այսինքն ուրոյն ժողովուրդ քան օտարները, բայց մեր հաւաքական ճիգով միայն կարող ենք բովանդակութիւն տալ «հայ» գաղափարին:

Այս աշխատանքը կազմակերպւած չէ, մինչդեռ նրա կազմակերպութիւնը բարձրօրէն անհրաժեշտ է մեր ուրոյն գոյութեան համար: Քանի դեռ չունինք հայրենիք, ուր բոլոր հայերը խմբւիլ կարենան՝ մենք ստիպւած ենք մնալ օտար միջավայրերի մէջ: Օտար միջավայրը նիւթական, իրաւական ու բարոյական ամէն հնար ունի մեզ կլանելու՝ մինչեւ իսկ առանց յատուկ հետապնդումի: Ապրուստի հոգը, զաւակների ապագան, ապահով կենցաղի պահանջը եւ քաղաքակրթական հակումների գոհացումը անզգալապէս մղում են հայ մարդուն ուժանալու իր ազգային զանգւածից եւ անձամբ տնօրինելու իր անձնական կեանքը, որ աստիճանական ծուլումով միայն կարող է դառնալ բնականոն: Երբ ամէն մի հայ դառնայ այն երկրի քաղաքացին, ուր ապրում է, իր զաւակներին տայ այն երկրի կրթութիւնը, ուր ապաստան է գտած, ապրէ այն պետութեան քաղաքական կեանքով, որի քաղաքացին է դարձած եւ գոհանայ այն մշակոյթով, որ ծաղկում է իր շուրջը - բոլոր խնդիրները կը լուծւին եւ բոլոր խոչ ու խութերը կը հարթւին, բայց միաժամանակ կը չքանայ եւ հայ զանգւածը իբր ուրոյն ազգութիւն, ուրոյն բարք ու լեզու եւ ուրոյն հոգեբանութիւն: Անհատական տեսակէտով բոլոր խնդիրները կը լուծւին լաւապէս, բայց ազգային տեսակէտով վատթար հետեւանքների կը հասնենք: Որքան անգիտակից լինի հայ զանգւածն իբր հայ, այնքան

աւելի դիւրին կ'ընթանայ իւր ծուլումը, որքան պակասի կամքը հայ մնալու, այնքան աւելի շուտ նոր սերունդը կ'օտարանայ, որովհետեւ թէեւ ծնողը կը դժարանայ իր ժառանգած ազգային կերպարանքը փոխելու, բայց արգելք չի կարող դառնալ զաւակների ապագայնացման, եթէ կրկնում ենք՝ պակասի հայ մնալու կամքը եւ անձնական բարեկեցութեան մտահոգութիւնը յաղթ ազգային կերպարանքի պահպանութեան պահանջին: Այսպիսով իրենց խորքի մէջ լաւ հայեր՝ կատարած կը լինեն ազգային վատ գործ, միշտ ազգ ու հայրենիք մտորելով եւ աւաղելով՝ իրենց զաւակներին օտարացման կը մղեն իրենց իսկ ձեռքով, ասելով թէ, նախ՝ «միջոց չունեն» եւ ապա՝ «ապրել պէտք է»:

Այս վիճակի համար է ասուած թէ «ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի»: Կարելի չէ հայ մնալ առանց գրկանքի եւ ոչ գրկանքից ազատել առանց հայութիւնը խաթարելու եւ ապա կորցնելու: Միայն սակաւաթիւ մարդիկ՝ զօրաւոր ազգային գիտակցութեամբ՝ կարող են ամէն ինչ զոհել հայ մնալու համար: Բայց մի քանի մարդ ազգ չեն եւ լինել չեն կարող, որքան եւ բարձրօրէն գիտակից հայ լինեն եւ վճռեն հայ մնալ մինչեւ իսկ յետին նեղութեան մէջ: Կացութիւնն ինքնին ծնունդ է տալիս պատեհապաշտ բարքի եւ հոգեբանութեան եւ աստիճանաբար մշակում է լեւանտէնի տիպարը: Ոչ ոք կարող է խորապէս հայ մնալով յաջողել օտար աշխարհի մէջ, եթէ մենակ է կամ սակաւաթիւ համամիտներ ունի: Միայն միատեսակ տենչ ու կամք ստեղծելով զանգւածների մէջ կարելի է կղզիացած հայութիւն պահել օտար ազգերի ծովերում: Այսպիսով ազգային գիտակցութեան պայծառացումը եւ նրա տարածումը զանգւածների մէջ միակ միջոցն է ազգի պահպանութեան մինչեւ այն օրը, երբ բաւական ընդարձակ հայրենիք ունենանք, որ կարենայ իր տարագիր զաւակներն ընդունել եւ այդ հայրենիքը բաւարար պայմաններ ունենայ՝ իր զաւակներին մարդավայել կեանքով ապրեցնելու:

Այս ուղղութեամբ աշխատելու բաւական ազդակներ ունենք մեր տրամադրութեան տակ, որ ժառանգած ենք մեր նախորդներից. եկեղեցին, լեզուն, որ դպրոց ասել է, ազգային ինքնավարութեան մնացորդներ (սահմանադրութիւն) եւ ցեղային զօրաւոր զգացում, այսինքն յատուկ բարք ու սովորոյթ եւ խորշանք օտար կենսածեւերից: Իսկ ազգի գիտակից խաւերը այս ամենի հետ ունեն նաեւ ազգային ուրոյն պատմութեան ծանօթութիւն եւ քաղաքական գիտակցութիւն:

ժողովրդի զանգւածը իր ազգային եկեղեցու մէջ մնալով՝ արդէն զգում է իր տարբերութիւնն օտար համայնքներից եւ այդքանը բաւական է իբր հիմք ազգային աւելի բարձր գիտակցութեան հասնելու եւ

գիտակցական զատորոշման համար՝ օտար զանգւածներից: Այլադաւան հայերի համար հայոց լեզուն բաւական զօրաւոր կապ է իր ազգայնութիւնը պահելու համար. ուստի անհրաժեշտ է, որ նրանց կրթութիւնը եւ պաշտամունքը հայոց լեզուով կատարւին: Նրանք ձեռքէ տւած են ազգային եկեղեցին յանուն ազատ եւ անձնադատ կրօնական մտածման կամ յանուն տիեզերական կրօնական միութեան, բայց ազգային տեսակետով մեծ չէ այս այլամետ ընթացքը, եթէ լեզուն եւ ազգային միութեան զգացումը պահւի: Այլադաւան հայութիւնը իր ինքնութիւնը պահելով իբր հայաբարբառ համայնք՝ դրանով իսկ նպաստած կը լինի ազգային միութեան: Այլադաւան հայութիւնը այն ժամանակ վտանգ կը դառնայ մեր համազգային գոյութեան, երբ իր հոգու փրկութեան ներելի մտահոգութեանը ստորադասէ համայն հայութեան դատը: Նրանք որ դաւանանքը գերադասում են ազգից՝ դրանով իսկ քայքայում են ազգային միութիւնը. նրանք որ իրենց հոգին փրկելու մտահոգութեամբ անտարբեր են դէպի ազգն ու նրա քաղաքական ճակատագիրը՝ դրանով իսկ խորապէս եսական են, ապազգային կամ հակազգային: Աստուած ամենագէտ է եւ ամէնիմաց. այսպէս են դաւանում եկեղեցիները. արդ, այն Աստուծոյ, որ լեզուներ շնորհեց վերնատանը նստողներին՝ դրանով իսկ կամեցաւ, որ իր պատգամը հաղորդւի բոլոր ազգերին նրանց սեփական լեզուով: Աստուած կարող է նաեւ հայերէն աղօթքը լսել եւ փառաւորել նաեւ հայ պաշտամունքով: Կառչիլ Աստծուն եւ ուրանալ մայրենի լեզուն - ազգադաւութիւն է. մտահոգիլ հոգու փրկութեամբ եւ անտես անել ազգի ազատութիւնը - նոյնպէս:

Ազգային-քաղաքական տեսակետով ամէն մի հայ մի ուժ է հայութեան համար՝ անկախ իր դաւանանքից: Դաւանանքը անհատական խղճի գործ է, մինչդեռ ազգային-քաղաքական գիտակցութիւնը հանրային պարտադրանք է, որից խուսափողը հայրենի ցանկը քանդող պիտի նկատուի՝ բոլոր դաւանութեանց պատկանող հայերի աչքին: Յարանաւանական գիտակցութիւնից վեր պիտի տիրաբար իշխէ ընդհանուր եւ համազգային մի ուրիշ գիտակցութիւն - ազգային- քաղաքական:

Մեր առջեւ գործունէութեան ընդարձակ հորիզոններ կան բացւած.- տարադաւան հայերին բերել այն գիտակցութեան, որ բոլորը միեւնոյն հին ազգի զաւակներն են եւ բոլորը ստորադաս վիճակ ունին այս աշխարհի մէջ՝ ազգային եկեղեցու զաւակներին հաւասար: Որ բոլոր հայերը ստորադաս են ոչ թէ որովհետեւ տարադաւան են, այլ որովհետեւ քաղաքական ազատութիւն չունեն. հետեւապէս բոլորի պարտականութիւնն է մտահոգիլ բովանդակ ազգի քաղաքական ազատութեան

համար առնուազն այնքան, որքան մտահոգ են իրենց հոգիների փրկութեան համար իրենց դաւանանքի միջոցով: Ազգային գիտակցութեան այս բարձունքին պէտք է հասնեն բոլոր դաւանութեանց պետերը եւ այս ոգով պէտք է դաստիարակեն այն հօտը, որ վարում են իբր կրօնական պետեր: Դաւանանքը կարող է արդիւնք լինել ազատ քննութեան, ինչպէս աւետարանական եկեղեցու մէջ, կամ հետեւանք լինել ժողովական վճիռների, ինչպէս մեր եւ կաթողիկէ եկեղեցու մէջ. եկեղեցին կարող է ազատ համայնք լինել կամ խստօրէն կարգապահ եւ հնազանդ մի գերագոյն պետի, բայց այս հանգամանքը պէտք չէ արգիլել, որ բոլոր հայերը գիտակցեն իրենց քաղաքական իրաւագրկումը եւ ձգտեն, իբր ուրոյն ազգ, նոյնիրաւ անդամը դառնալ մարդկային մեծ ընտանիքի, ունենալով իրենց սեփական հայրենիքը եւ ազգային պետութիւնը: Եկեղեցական տեսակետով եթէ ոմանք անիշխանական են, ոմանք տարիշխանական՝ ազգային տեսակետով ամենքը պէտք է դառնան հայիշխանական: Այս ուղղութեամբ հայութիւնը դուրս կը գայ յարանւանական նեղ սահմաններից, ուր նա դաւանակից է միայն, եւ կը բարձրանայ քաղաքական մտածութեան ոլորտը՝ դառնալով քաղաքացի հայոց տենչալի պետութեան: Այդ պետութիւնը ստեղծել չի կարող, մինչեւ ամէն հայ նոյնքան զօրապէս չզգայ քաղաքացիութեան պահանջը, որքան զօրաւոր է իր հոգու փրկութեան տենչը: Աշխարհն անցաւոր է անշուշտ եւ ամենքս մահկանացու. ներելի է, որ մարդ մտահոգ լինի իր հանդերձեալ կեանքի մասին, բայց ազգն իբր հաւաքական գոյութիւն ապրում է այս անցաւոր աշխարհում եւ պէտք է որ ապրի միւս ազգերին նոյնիրաւ:

Մարդկային մշակոյթը լինի կրօն, գիտութիւն, արւեստ թէ պետութիւն, բարք թէ տնտեսութիւն ազգային կերպարանք ունի այս աշխարհում. որդեգրել օտար մշակոյթ օտար կերպարանքով ոչ թէ ժխտումն է այս ընդհանուր օրէնքի, այլ անգիտացումը եւ ուրացումը սեփական կերպարանքի: Նա որ ազգային մշակոյթի կրողը չէ, կրողն է այլազգի մշակոյթի: Յաւերժութիւն խոկալով անցաւորն անտես անել եւ անցաւոր ձեւերի տարբերութեանը կարեւորութիւն չը տալով՝ սեփականին անփոյթ գտնելի - նշանակում է ազգային մշակոյթը քայքայել, առանց մշակոյթների ազգային կերպարանքը վերացնելու, որովհետեւ մարդկութիւնը վերացական գաղափար է. կան միայն ազգեր ու ցեղեր իրենց ուրոյն կերպարանքով:

Դատողութեանց այս շարքից ինքնին հետեւում է, որ պէտք է ազգային գիտակցութիւնը պայծառացնել, տարբեր ազդակների դերը ճշտել այս համազգային գործի մէջ եւ մեր ժամանակի ազգային

գիտակցութիւնը արմատացնել հայութեան բոլոր խաւերի մէջ: Այդ հնարաւոր է միմիայն անդուլ եւ ծրագրուած աշխատանքով, որ պիտի կատարեն բոլոր գիտակից հայերը:

Երկու հիմնական գաղափարներ կան, որ ազգային գիտակցութեան հիմնաքարերը պիտի կազմեն. կրթութիւն մայրենի լեզուով, կրթութիւն ազատութեան համար. հետեւապէս, ազգային-քաղաքական տենչերի արծարծում կրթութեան միջոցով եւ նոր հայութեան պատրաստութիւն: Նոր սերունդին պիտի ներարկել զօրաւոր ազգային գիտակցութիւն քաղաքական իմաստով: Նրան պէտք է ներշնչել, որ ինքը հայ է, եւ ուրեմն տարբեր ազգի զաւակ քան այն մարդիկ, որոնց երկրի մէջ ապրում է այսօր. որ նա ունի մի բնիկ հայրենիք, որ պէտք է ազատագրուի: Նրան պէտք է ներշնչել, որ իր ազգը ընդունակ է հանրօգուտ ազգային մշակոյթ ստեղծելու, որի ապացոյցը տուած է դարերի ընթացքին, եւ որ այդ մշակոյթը կարող է զարգանալ եւ արմատանալ միմիայն ազատ պայմանների մէջ եւ սեփական հայրենիքում: Նրան պէտք է համոզել, որ այս մեծ գործի համար անհրաժեշտ է, որ նա հայ մնայ եւ հայ պահէ իր սերունդը եւ եթէ ինքն ու իր ընկերները չկարենան ստեղծել ազատ հայրենիք ու պետութիւն՝ այդ սրբազան տենչը պէտք է փոխանցեն իրենց զաւակներին:

Պէտք է սովորեցնել խստօրէն տարբերել ազգութիւնը դաւանանքից, հասկացնելով թէ ազգութիւնը մէկ է, մինչդեռ դաւանանքները կարող են մի քանի լինել. որ կրօնը մարդու կապն է իր Աստծու հետ, իսկ ազգութիւնը մարդու կապն է իր հայրենիքի եւ մշակոյթի հետ. որ երկուսն եւս նկատի ունեն յաւերժական կեանքը, բայց մէկն անձնական կեանքի տեւողութիւնը հանդերձեալի մէջ, միւսն ազգային մշակոյթի տեւողութիւնն այս աշխարհում. որ մարդկային ինքնագիտակցութեան այս երկու ձեւերը - դաւանական եւ ազգային - իրար չեն ժխտում իբրեւ սկզբունք եւ նպատակ, որովհետեւ նրանք գոհացում են տալիս տարբեր պահանջների. մէկն անձնական է, միւսը՝ հանրային. մէկը հաւաքում է նոյն դաւանութեան անդամներին, միւսը՝ նոյն ազգութեան զաւակներին. դաւանական խմբակցութիւնները մասնական են, ազգը՝ - հանրական. դաւանական խմբերը ազգի ծոցի մէջ են ապրում եւ ազգի մասերն են կազմում, մինչդեռ ազգն իր դաւանական խմբերով միասին համայն մարդկութեան մէկ ուրոյն անդամն է եւ պէտք է միւս անդամներին լինի նոյնիրաւ: Ազգի քաղաքական նոյնիրաւութիւնը, որ ասել է՝ ազգի ազատութիւնն ու անկախութիւնը համազգային գործ է եւ վերաբերում է բոլոր դաւանութեանց անխտիր, ուստի ազգի քաղաքական ճակատագրի տնօրինումը պէտք է լինի ազգի ձեռքին եւ ոչ նրա դաւանութեանց

պետերի: Դաւանութեանց պետերը դաւանութեանց հետ գործ ունեն եւ ոչ ազգի լրութեան: Նրանց կոչումն է պարզել իրենց հօտի կրօնական գիտակցութիւնը եւ ոչ թէ վարել ազգի լրութեան ճակատագիրը: Ազգային ճակատի ղեկավարութիւնը աշխարհիկ եւ քաղաքական գործ է եւ ոչ հոգեւոր-դաւանական եւ ամէն մի հայ դաւանապէս ստորադաս լինելով իր հոգեւոր պետին, իբրեւ ազգի անդամ՝ պէտք է ստորադաս լինի իր ազգութեան:

Թէ՛ ազգ, թէ՛ եկեղեցի իրենց պահանջն ունեն մարդուց. այս պահանջներն իրենց խորքի մէջ եւ էութեան չեն կարող բնաւ իրար հակասել, որովհետեւ եկեղեցին ազգայնութեան կրօնական արտայայտութիւնն է: Գերազգային եկեղեցիները - ինչպէս պապականը - կարող են վարել տարբեր ազգերի պատկանող մարդկանց խիղճն ու դաւանական միտքը, բայց նրանք չեն կարող եւ պէտք չէ վարեն այդ ազգերի քաղաքական ճակատագիրը: Միշտ պէտք է յիշել, որ դաւանական մաքուր ջրերին յաճախ խառնուում են քաղաքական անմաքուր ջրեր եւ շատ անգամ դաւանակցութիւնը դարձնում են խարիսխ քաղաքական ազդեցութեան: Այս դէպքում ծագում է երկընտրանք - դաւանա՞նք թէ ազգութիւն. այս երկընտրանքի մէջ պէտք է յաղթանակէ ազգութիւնը, որովհետեւ երկնաւոր հօր եւ իր զաւակների միջեւ չկայ եւ լինել չի կարող քաղաքական յարաբերութիւն:

Ազգային գիտակցութիւն մշակել եւ մշակածը ներարկել - տարբեր գործեր են. մշակումը պէտք ունի ստեղծագործ կարողութեան, իսկ ներարկումի համար բաւական է մշակածի ըմբռնումը եւ հանրացումը: Բնորոշել ազգային «ոգին», այսինքն մտածումի, զգացումի եւ կամեցողութեան այն ուրոյն կերպերը, որ յատուկ են հայութեան՝ գիտունի, արւեստագէտի եւ քաղաքագէտի գործն է: Գիտունն է որ հետախուզելով այդ «ոգին» իր արդէն իրացած ձեւերի մէջ - բարիքի, պատմութեան, իրաւունքի, հաւատքի, արւեստի եւ տնտեսութեան՝ զատորոշում է բուն ազգայինը եկամուտ ազդեցութիւնից: Արւեստագէտը սնւելով այն բարձունքներին, ուր հասած է ազգային «ոգին»՝ ստեղծագործում է նորը, բայց միշտ նոյն «ոգով», որ փչում է ազգի ապրումն կամ ապրած երկերի մէջ՝ լինին նրանք նազ թէ երգ, շէնք թէ քերթուած, նկար թէ զարդ: Քաղաքագէտը հետազօտելով ազգի անցած ուղիները եւ նրա առձեռն կարողութիւնը՝ ստեղծում է նոր յարմարումներ տիրող կացութեանց եւ ընթացք է տալիս ազգի հաւաքական ճիգին: Ժողովրդի գիտակից խաւերը, որ ընդունակ են ըմբռնելու բայց ոչ ստեղծագործելու՝ իւրացնում են իւրացնելին եւ ծաւալում հանրութեան մէջ, ստեղծելով նոր բարք եւ նոր մտայնութիւն եւ նոր պահածք ու վարմունք հանրային եւ

մասնաւոր կեանքի մէջ: Այստեղ դեր ունեն եւ ազգային եկեղեցու ստեղծագործ վարիչները, որ աւանդական դաւանանքին տալիս են նոր մեկնութիւն եւ եկեղեցական կեանքին նոր ձեւաւորում, բայց միշտ նոյն «ոգով», որ իրացած է պատմութեան մէջ իր ժամանակին յարմար ձեւերով: Մշակելով աւանդութեամբ մեզ հասածը, որ ասել է՝ նորն ստեղծելով, ազգի մտաւորական եւ ստեղծագործ ընտրանին կատարած կը լինի իր պատմական դերը: Բայց այս բոլոր գործերը - լինի ստեղծագործութիւն թէ ստեղծածի հանրացում - պիտի կատարուեն մի գերագոյն հրամայականի ստորադաս, որ է ազգի գոյութեան եւ ուրոյնութեան պահպանութիւնը եւ պաշտպանութիւնը: Որքան հայն իրան զգայ հայ եւ ուրոյն ազգ քան միւս ազգերը, այնքան պակաս կարեւորութիւն կը ստանայ այս կամ այն աւանդական պիտակը, որովհետեւ մանուկը չի դադարում նոյն մարդը լինել թէեւ արդէն մազ ու մօրուք ունի եւ տարբերում է իր նախորդ վիճակներից. նոյն ոգին է նա եւ նոյն մարմինը՝ բարգաւաճ թէ ազազուն, նայած կեանքի պայմաններին:

Այս հիմնական գաղափարների վրա պէտք է կառուցւի մեր ժամանակի ազգային կեանքը եւ այս սկզբունքներով պէտք է ղեկավարւի մեր հանրային գործունէութիւնը:

«ՎԷՄ»,
Փարիզ 1938թ., թիւ 2

ՌՈՒՍԱՍՏԱՆ.
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Գազիկ Տեր-Չարությունյան

ՀՀ քաղաքական ընտրանու մի զգալի մասը ներկայումս խոր քերահավատությամբ է լցված Ռուսաստանի նկատմամբ: Վրաստանից ռազմակայանների դուրսբերման խնդրում Ռուսաստանի անվճռական դիրքորոշումը, Ադրբեջանի հետ վարվող երկիմաստ քաղաքականությունը, ինչպես նաև Թուրքիայի հետ ռազմավարական հարաբերություններ հաստատելու փորձը էլ ավելի նվազեցրին այդ երկրի վարկանիշը մեր հանրությունում: Մինչդեռ Ռուսաստանը, մի շարք առարկայական ցուցանիշների համաձայն՝ վերելք է ապրում, ինչը նշանակում է, որ այդ տերությանն այսօր տրվող գնահատականներում պետք է հաշվի առնել այն դերը, որ ստանձնելու է նա մոտ ապագայում:

* * *

Այսօր ԱՄՆ-ը Ռուսաստանի դեմ վարում է նույն տիպի սառը պատերազմ, ինչպիսին ԽՍՀՄ օրոք էր: Սակայն, ի տարբերություն նախկինի, ներկայումս Ռուսաստանը դեռ չի վերականգնել երբեմնի հզորությունը, իսկ Արեւմուտքը վերջին երկու տասնամյակում համաչափ զարգացել է: Այսինքն՝ այսօր շարունակական ճնշումները Ռուսաստանի վրա էապես ավելի արդյունավետ են, քան նախկինում: Ի լրումն, ԱՄՆ-ը իր ռազմավարությունը լրացրել է նոր տարրերով. դրանցից նշենք այն թեզը, թե ռուսներն ի վիճակի չեն միայնակ պաշտպանել իրենց միջուկային օբյեկտները «միջազգային ահաբեկիչներից», եւ այդ պատճառով անհրաժեշտ է ամերիկյան վերահսկողություն սահմանել ռուսական միջուկային զինանոցների վրա: Հիշենք, որ համաձայն մի վարկածի՝ Մ.Խոդորկովսկին, իշխանության գալուց հետո, պետք է ԱՄՆ-ին վաճառեր Ռուսաստանի միջուկային վառելիքի բոլոր պաշարները: Միաժամանակ, հայտնի են նաև որոշ սցենարներ, համաձայն որոնց՝ ամերիկյան զինուժը Ռուսաստանի միջուկային զինանոցները «ահաբեկիչներից պաշտպանելու» պատրվակով դեսանտ պետք է իջեցնի այդ երկրի տարածք:

Սակայն միջուկային զենքը մնում է Ռուսաստանի ինքնիշխանության հիմնական գրավականը: «Միջուկային» շեշտադրումը ստիպում է այդ տերությանը անվտանգությանն ուղղված գումարների մի զգալի մասը

ծախսել՝ միջուկային-ռազմավարական ենթակառուցվածքները պահպանելու համար: Ամերիկյան մեթոդներն այս մասով կրկնում են սառը պատերազմի տարիների ռազմավարությունը՝ ուղղված ԽՍՀՄ տնտեսական թուլացմանը: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան նպաստում են, որպեսզի Ռուսաստանը ծանր պայքար վարի ահաբեկչության դեմ Յյուսիսային Կովկասում: Դա նույնպես մասամբ կրկնում է այն իրավիճակը, որը ստեղծվել էր Երկրորդ աշխարհամարտից հետո Արեւմտյան Ուկրաինայում եւ Մերձբալթիկայում (պայքարը բանդերականների ու «անտառային եղբայրների» դեմ), այն տարբերությամբ, որ Ռուսաստանի սահմանները, ի տարբերություն նախկինի, բաց են: Այս վերջին խնդրի լրջության մասին է վկայում Ռուսաստանի հարավային (Մոնղոլիայից մինչեւ Սեւ ծով) սահմանային համակարգի ձեւավորման համար \$2.3 մլրդ հատկացնելու մասին Պուտինի որոշումը, որը զուգորդվում է լրացուցիչ զինվորական միավորումների տեղակայումով Յյուսիսային Կովկասում:

Վերոհիշյալ իրողությունները ստիպում են Ռուսաստանին իր քաղաքական, ռազմական եւ տնտեսական ռեսուրսների զգալի մասը ուղղել նոր սառը պատերազմում դիմակայելուն: Միեւնույն ժամանակ, սեփական ռեսուրսների սահմանափակությունը ստիպում է նրան ռազմավարական գործընկերներ փնտրել: Տեղի է ունեցել եվրակենտրոն տերությունների՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի հետ հարաբերությունների սերտացում, սակայն ակնհայտ է, որ այդ երկրները չեն կարող Ռուսաստանի համար լիարժեք դաշնակից լինել. լավագույն դեպքում ապագայի հակամարտություններում ԵՄ-ը կարող է բուֆերային դերակատարում ունենալ: Այս պարագայում ավելի հեռանկարային է թվում Չինաստանի հետ համագործակցությունը՝ հզորացող Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակներում: Սա համեմատաբար նոր տարր է Ռուսաստանի քաղաքականությունում, եթե հաշվի չառնենք Ստալին-Մաո կարճատեւ դաշինքը: Սակայն այն տարիներին ԽՍՀՄ առաջնությունը ակնհայտ էր, իսկ ներկայումս դերերը փոխվել են: Միեւնույն ժամանակ, թվում է, թե Ռուսաստանի համար այլ աշխարհաքաղաքական այլընտրանքներ գոյություն չունեն: Դրա մասին են վկայում այս ամռանը կայացած ռուս-չինական «Խաղաղ առաքելություն - 2005» զինավարժությունները, որոնց ընթացքում մշակվեցին ոչ թե Թայվանի (ինչպես դա շրջանառության մեջ էր դրված ՁԼՄ-ում), այլ Յյուսիսային Կորեայի հետ կապված հնարավոր զարգացումները: Ռուս-չինական գործողությունները, թերեւս, ուղերձ էին ԱՄՆ-ին առ այն, որ ուժային քայլերը Յյուս. Կորեայի ուղղությամբ հակազդեցություն են ստանալու:

Սակայն ռուս-չինական զինավարժություններն ընդամենը մի մասն էին այն ռազմավարական միջոցառումների, որոնք ձեռնարկել էր Ռուսաստանը: Առաջին փուլում Չյուսիսային նավատորմն իր գրեթե ողջ կազմով դուրս եկավ բաց ծով եւ համապատասխան խուսանավումներից հետո ատոմային սուզանավից բալիստիկ հրթիռ արձակեց: Դրան զուգահեռ՝ ռազմավարական Տու-160 ռմբակոծիչները օդ բարձրացան Սարատովի մարզից եւ թելավոր հրթիռներով հարված հասցրին Վորկուտայում գտնվող թիրախներին: Պետք է առանձնահատուկ ուշադրություն հատկացնել նաեւ նույն ժամանակահատվածում իրականացված «Կասպից-Չակասահաբեկչություն-2005» լայնածավալ զինավարժություններին, որոնք հնարավորինս մոտեցված էին հավանական պատերազմական իրավիճակներին:

Նշենք, որ նման լայնածավալ զինավարժությունների համախումբ չէր իրականացվել անգամ ԽՍՀՄ օրոք: Դրանով Ռուսաստանը ցույց տվեց միջազգային հանրությանը, որ ունակ է «պատերազմել» միանգամից մի քանի թատերաբեմերում (համարվում էր, որ այդպիսի գործողություններ կարող է իրագործել միայն ԱՄՆ-ը): Բացի դրանից, հաջող անցկացված զինավարժություններն անհրաժեշտ են Ռուսաստանին՝ թոթափելու կայսրության փլուզումից հետո գոյացած պարտության բարդույթը:

* * *

Ռուսաստանի ներկայիս դժվարությունների մի զգալի մասը պայմանավորված է այդ երկրի տնտեսական իրավիճակով: Բնական մեծ ռեսուրսներով օժտված այդ տերությունը միայն վերջերս կարողացավ մտնել ամենախոշոր տնտեսություններ ունեցող երկրների տասնյակի մեջ՝ այն էլ գրավելով վերջին տեղն այդ ցուցակում: Սակայն այդ փաստը նաեւ վկայում է, որ Ռուսաստանի տնտեսությունը վերելք է ապրում: Ռուսաստանի կառավարության ներկայացրած 2006թ. նախնական բյուջեն կազմել է \$176 մլրդ, ինչը 60%-ով ավելի է, քան 2005թ. \$110,9 միլիարդանոց բյուջեն (հիշենք, որ 1999-ին բյուջեն կազմում էր մոտ \$25 մլրդ): Համաձայն հաշվարկների, եթե առաջիկա 8 տարում նավթի 1 բարելի գինը չիջնի \$50-ից, ապա 2013թ. Ռուսաստանի ՀՆԱ-ն կհավասարվի \$2.8 տրիլիոնի, իսկ միջին աշխատավարձը՝ \$1400-ի: Ոսկե-տարադրամային պահուստները նույնպես աճել են եւ համեմատական են բյուջեի չափին: Լրացուցիչ կուտակվել են բազմամիլիարդ գումարներ, այսպես կոչված, «ստաբիլիզացիոն ֆոնդում», որը ձեւավորվում է նավթի գների աճի արդյունքում լրացուցիչ գանձվող գումարներից: Հատկանշական է, որ Պուտինը, փաստորեն, ձեւավորել է

իր ղեկավարությամբ գործող մի «գուգահեռ կառավարություն», որի խնդիրն է ազգային նշանակություն ունեցող նախագծեր իրագործել «ստաբիլիզացիոն ֆոնդի» միջոցով:

Տնտեսության աճը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայում էներգակիրների գների կտրուկ (վերջին երեք տարում՝ ավելի քան 2 անգամ) բարձրացմամբ: Միեւնույն ժամանակ, հայտնի է, որ Ռուսաստանի էներգետիկ սեկտորի, այսինքն եւ՝ ողջ տնտեսության մի զգալի մասը գտնվում է օլիգարխական կապիտալի ձեռքում: Ինչպես ցույց տվեցին Բերեզովսկու եւ Խոդորկովսկու հետ կապված զարգացումները, նման իրավիճակը երբեմն դուրս է գալիս տնտեսական ոլորտից ու կարող է անմիջականորեն առնչվել ազգային անվտանգության եւ աշխարհաքաղաքականության հետ կապված խնդիրներին:

Ելնելով վերոհիշյալ իրողությունից՝ Պուտինի վարչակազմը փորձում է համակարգել օլիգարխների հետ իր հարաբերությունները: Այսօր դրանցից ամենահավակնոտները կամ վտարված են (Բերեզովսկի, Գուսինսկի), կամ էլ դատապարտված (Խոդորկովսկի): Մյուս խոշոր օլիգարխը՝ Չուկոտկայի նահանգապետ Աբրամովիչը, ամեն կերպ ցուցաբերում է իր չեզոքությունը Պուտինի վարչակազմի նկատմամբ: Միաժամանակ, նա իր կապիտալը տեղափոխում է Արեւմուտք եւ ներդնում այն եվրոպական անշարժ գույքի ու սպորտի բիզնեսում: Աբրամովիչին պատկանող «Սիբնեֆտի» բաժնետոմսերի 72%-ը պատրաստվում է գնել «Գազպրոմը» վճարելով դրա համար ավելի քան \$13 մլրդ (1996թ. Բերեզովսկին եւ Աբրամովիչը գնել էին «Սիբնեֆտը» 130 անգամ էժան՝ վճարելով ընդամենը \$100 մլն): Բնորոշ է, որ ինչպես Խոդորկովսկուն պատկանող ընկերությունների («Յուկոս» եւ այլն) գնման պարագայում, այնպես էլ «Սիբնեֆտի» դեպքում, անհրաժեշտ գումարները Ռուսաստանը ստանում է գերմանական առաջատար բանկերից (ինչի դեմ յուրովի բողոքում են արեւմտյան այլ ֆինանսական կառույցները՝ պարբերաբար մեղադրելով գերմանական բանկերին ռուսական փողերի «լվացման» մեջ):

Կրեմլին իրենց հավատարմությունը հայտնած օլիգարխներին Պուտինը փորձում է օգտագործել հոգուտ պետության: Օրինակ, Կրեմլը սերտորեն գործակցում է նավթային օլիգարխ Վեկսելբերգի հետ, որի ներկայացմամբ վերջերս Արդյունաբերական պալատի ղեկավար ընտրվեց Շոխինը (Վոլսկու փոխարեն): Այումինային բիզնեսի գլխավոր մագնատը՝ Դերիպասկան, այսօր կատարում է Պուտինի աշխարհատնտեսական հանձնարարականները ԱՊՀ երկրներում, մասնավորապես՝ Տաջիկստանում (որտեղ կառուցվում է խոշոր էլեկտրակայան): Ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ Պուտինը փորձում է օլիգարխների նկատմամբ

վարել ցարական արքունիքին բնորոշ քաղաքականություն, այսինքն՝ աշխատել նրանց հետ փոխշահավետ հիմունքներով: Հարկ է նաեւ նշել, որ օլիգարխների՝ Պուտինի հետ աշխատելու պատրաստականությունը վկայում է նաեւ այն մասին, որ այսօր Ռուսաստանը վերականգնվում է որպես ուժի կենտրոն. հայտնի է, որ միջազգային կապիտալի ներկայացուցիչները նման իրողություններն ըմբռնում են ավելի քան արագ:

Բոլոր պարագաներում պետք է փաստել, որ Կրեմլի քաղաքականության շնորհիվ էապես աճել է պետության բաժինը տնտեսության նավթագազային սեկտորում: Եթե նախկինում պետությունը վերահսկում էր այդ ոլորտի մինչեւ 10-14%-ը, ապա «Սիբնեֆտ»-«Գազպրոմ» գործարքի իրականանալուց հետո այդ ցուցանիշը կգերազանցի 50%-ը: Բնորոշ է նաեւ, որ էներգետիկ ընկերությունների խորհուրդներում տեղ են գրավել Պուտինի աշխատակազմի անդամները, այսինքն՝ էներգետիկ բիզնեսը գտնվում է Կրեմլի անմիջական վերահսկողության տակ:

Սիեւնոյն ժամանակ, անհնարին է միայն էներգետիկ ոլորտում ունեցած հաջողություններով լուծել տնտեսության խնդիրները: Այսօր Ռուսաստանում ընթանում են առողջապահության, գիտության եւ կրթության համակարգի բարեփոխումներ: Համաձայն կառավարության ընդունած որոշումների, բժիշկների աշխատավարձն արդեն 2006-ին լինելու է առնվազն \$350, լուրջ գումարներ են հատկացվելու ոլորտի տեխնիկական վերազինմանը: Կրթության բնագավառում բարեփոխումների հիմնական նպատակը համառուսաստանյան ծրագրերի եւ 11-ամյա դպրոցական ուսուցման համակարգի ներդրումն է: Գիտության բնագավառում ենթադրվում է, որ առաջիկա 2 տարում հիմնարար գիտության ֆինանսավորումն աճելու է 2 անգամ եւ կազմելու է մոտ \$4 մլրդ, իսկ գիտական հաստատությունների աշխատակիցների աշխատավարձը միջին հաշվով բարձրանալու է մինչեւ \$1000: Նկատենք, որ գիտական հանրությունն առայժմ միանշանակ չի գնահատում պուտինյան այդ բարեփոխումները: Սակայն բոլոր դեպքերում, համաձայն պաշտոնական եւ ոչ պաշտոնական տեղեկությունների, գիտությունը Ռուսաստանում սկսել է ոտքի կանգնել:

* * *

Ամփոփելով կարելի է փաստել, որ տնտեսական եւ ռազմական ոլորտում ունեցած վերելքի շնորհիվ Ռուսաստանը թեւակոխել է զարգացման նոր փուլ, երբ այդ տերությունը փորձում է «արտաքին աշխարհի» նկատմամբ ավելի վստահ եւ համարժեք պահվածք ցուցաբերել: Հարկ է նաեւ նշել ռուսաստանյան քաղաքականության հաջողու-

թյունները Ուկրաինայի, Կիրգիզիայի եւ հատկապես Ուզբեկստանի հետ հարաբերություններում, այսինքն՝ այն երկրների, որոնք համարվում էին «կորած» Ռուսաստանի համար: Դա վկայում է, որ որոշակի առաջընթաց է ապրում նաեւ այդ տերության քաղաքական մշակույթը: Այդ համատեքստում բացառված չէ, որ նոր որակ տրվի ՀՀ-ի հետ ունեցած հարաբերություններին:

Քաղաքական տեսակետից՝ Ռուսաստանի հաջողությունները նաեւ պայմանավորված են այն հայտնի դժվարություններով, որ վերջին ժամանակահատվածում ունեն ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի ներկայիս իրավիճակը զգալի չափով պայմանավորված է Պուտինի անձով, որի վարկանիշը հասել է ռեկորդային 49%-ի սահմանին. այսինքն՝ այդ տերության ապագան դեռեւս հստակ չէ: Այդ առումով կարելիորագույն դերակատարում կունենան 2008թ. նախագահական ընտրությունները:

**ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՐՔԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ.
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԵՐՍՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԵՐ
Ռուբեն Սաֆրաստյան**

Եվրամիության (ԵՄ) անդամ երկրները, երկարատեւ կոնֆիդենցիալ քննարկումներից ու բազմաթիվ իրարամերժ հրապարակային հայտարարություններից հետո, ս.թ. հոկտեմբերի 3-ին Լյուքսեմբուրգում ընդունեցին Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու որոշում՝ այդ երկրի ԵՄ-ին լիիրավորեն անդամակցելու վերաբերյալ: Արդեն հրապարակվել են այդ բանակցությունների ընթացքի շրջագիծը նախանշող սկզբունքները եւ դրանց ժամանակ քննարկվելիք խնդիրները պարունակող փաստաթղթի վերջնական տեքստը, որն արժանացել է ինչպես ԵՄ, այնպես էլ Թուրքիայի հավանությանը:

ԵՎ բանակցություններ սկսելու բուն փաստը, ե՛ւ նշված փաստաթուղթը, ինչպես նաեւ հոկտեմբերի 3-ին նախորդած դիվանագիտական բարդ զարգացումներն ունեն կարելուք քաղաքական ու աշխարհաքաղաքական նշանակություն, եւ նրանց վերլուծությունն ու մեկնությունը հնարավորություն են տալիս ոչ միայն ավելի հստակ պատկերացում կազմել Եվրոպա-Թուրքիա փոխհարաբերությունների ներկա փուլի առանձնահատկությունների, այլեւ միացյալ Եվրոպայի այն տեսլականի մասին, որը ներկայումս գերակայում է եվրոպական առաջատար պետություններում:

ԵՄ-Թուրքիա հարաբերությունները Հայաստանի համար ունեն կարելուք նշանակություն, քանի որ եվրաինտեգրումը հայտարարված է մեր երկրի արտաքին քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակներից մեկը: Բացի դրանից, շատերը Հայաստանում հույս ունեն, թե Թուրքիայի հետ բանակցությունների ընթացքում ԵՄ-ը ճնշում կգործադրի վերջինիս վրա՝ պահանջելով, որ նա հրաժարվի Հայաստանի նկատմամբ իրականացվող «հարկադրման» քաղաքականությունից, բացի իր սահմանը Հայաստանի հետ ու ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Անգլո-ամերիկյան դիվանագիտության հաղթանակը

Սկսած 19-րդ դարի 30-ական թվականներից՝ Մեծ Բրիտանիայի դիվանագիտությունը Օսմանյան կայսրության նկատմամբ որդեգրեց նրա տարածքային ամբողջականության հնարավորինս պահպանման

քաղաքականություն, քանի որ մտավախություն ուներ, թե վերջինիս տրոհման դեպքում առաջացող նորանկախ պետությունները կարող էին ընկնել նրան սահմանակից ցամաքային եվրոպական պետությունների, ինչպես նաև Ռուսական կայսրության ազդեցության տակ, ինչը կթուլացներ բրիտանացիների դիրքերը: Այդ քաղաքականությունը մտավ դիվանագիտության պատմության մեջ որպես «ստատուս քվոյի» պահպանման քաղաքականություն: Դրա բաղկացուցիչ մասն էին կազմում Օսմանյան կայսրության ներգրավումը եվրոպական պետությունների համակարգի մեջ եւ նրա ներսում արեւմտամետ բարենորոգումների իրականացումը, ինչը թույլ կտար բարելավել հպատակ քրիստոնյա ժողովուրդների դրությունը եւ կասեցնել նրանց զինված պայքարը թուրքական բռնապետության դեմ:

Ներկա պայմաններում նույնպես բրիտանական դիվանագիտությունը գտնում է, թե անհրաժեշտ է հնարավորինս սերտորեն ներգրավել Թուրքիան եվրոպայի քաղաքականության ու տնտեսության ոլորտները՝ ընդունելով նրան ԵՄ կազմի մեջ որպես լիիրավ անդամ: Այս դեպքում, գտնում են բրիտանացի քաղաքագետները, հնարավորություն կստեղծվի ճնշում գործադրել նրա վրա եւ ստիպել շարունակել արեւմտամետ բարենորոգումները՝ այդպիսով ապահովելով մահմեդական բնակչություն ունեցող Թուրքիայի համար բացառիկ կարգավիճակ ժամանակակից աշխարհում: Իր դերն է կատարում նաև մտավախությունը, թե մերժում ստացած Թուրքիան կարող է դառնալ անկանխատեսելի եւ վտանգ կներկայացնի Արեւմուտքի շահերի համար:

Սակայն Մեծ Բրիտանիան հնարավորություն չունի ժամանակակից եվրոպայում հասնել իր դիվանագիտական նպատակներին՝ գործելով միայնակ, այդ պատճառով նա սերտորեն համագործակցում է ԱՄՆ-ի հետ, որը կիսում է վերը նշված մոտեցումները: ԱՄՆ կողմից վերջին պահին կիրառված կոշտ ճնշումը տատանվող եվրոպական երկրների վրա փոխլրացրեց բրիտանացիների նպատակասլաց ու ճկուն դիվանագիտությունը եւ դարձավ որոշիչ գործոն դրական որոշում ընդունելու մեջ:

Ցամաքային եվրոպայի առաջատար պետությունները հիմնականում համակարծիք էին այդ մոտեցմանը: Դրանցից ոմանք, հաշվի առնելով իրենց երկրներում գոյություն ունեցող բացասական վերաբերմունքը Թուրքիայի անդամակցության նկատմամբ, ինչպես նաև այն բազմաթիվ վտանգները եւ դժվարությունները, որոնցով հղի է այդ անդամակցությունը, փորձում էին մաներել. նրանց ղեկավարներն անում էին իրարամերժ հայտարարություններ, սակայն վերջ ի վերջո միացան Մեծ Բրիտանիային:

Հատկանշական է այդ տեսակետից Ֆրանսիայի դիրքորոշումը, որը

Լյուքսեմբուրգյան բանակցություններից շաբաթներ առաջ եկավ գաղտնի համաձայնության անգլիացիների հետ եւ հրաժարվեց իր բոլոր վերապահումներից ու նախապայմաններից, որոնց մասին բազմիցս հրապարակային հայտարարություններ էին արել այդ երկրի ղեկավարները՝ այդպիսով մեծապես կանխորոշելով վերջնական դրական որոշումը՝ բանակցություններ սկսել Թուրքիայի հետ:

Եվրոպական քաղաքական ուժերից միայն Գերմանիայի քրիստոնեադեմոկրատները ի վիճակի գտնվեցին առաջարկել երկընտրանք անգլիացիների մոտեցմանը: Այն ձեւակերպվեց Թուրքիայի ԵՄ մերձավոր դաշնակցի կարգավիճակի տեսքով, ինչը պետք է դարձվեր բանակցությունների առարկա այդ երկրի հետ: Այդ առաջարկին միացան նաեւ համանման ուղղվածության մի շարք այլ եվրոպական հեղինակավոր ուժեր: Սակայն քրիստոնեադեմոկրատների համեմատական անհաջողությունը սեպտեմբերյան խորհրդարանական ընտրություններում եւ միատարր կառավարություն կազմելու նրանց անկարողությունը հնարավորություն չտվեցին այդ տեսակետի կողմնակիցներին հաստատական լինել իրենց առաջարկում եւ այդ ուղղությամբ լուրջ ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա:

Այդ տեսակետի կողմնակից Ավստրիան, մնալով միայնակ, օգտագործեց ստեղծված իրադրությունն իր դիվանագիտության մարտավարական բնույթի խնդիրը լուծելու համար: Սակարկության արդյունքում նա հրաժարվեց իր տեսակետից՝ Թուրքիայի արտոնյալ դաշնակցային կարգավիճակի վերաբերյալ եւ փոխարենը հասավ այն բանին, որ ԵՄ-ը որոշում ընդունի վերսկսել անդամակցության վերաբերյալ ընդհատված բանակցությունները Ավստրիայի դավանակից խորվաթիայի հետ:

Հունական (Հունաստան – Կիպրոս) դիվանագիտությունը Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու հարցն օգտագործեց՝ դրականորեն լուծելու համար իր տեսակետից ավելի կարելու մի խնդիր՝ ապահովել Կիպրոսի անդամակցությունը ՆԱՏՕ-ին: Նա չկիրառեց վետոյի իր իրավունքը եւ փոխարենը ստացավ Թուրքիայի բանավոր համաձայնությունը՝ չխոչընդոտել եւ ԱՄՆ նույնպես բանավոր խոստումը՝ օժանդակել դրան:

Այսպիսով, կարելի է արձանագրել անգլո-ամերիկյան դիվանագիտական հերթական հաղթանակը Եվրոպայում:

Միացյալ Եվրոպայի տեսլականը եւ Թուրքիան

Թուրքիայի անդամակցության հարցն ավելի պարզորոշ դարձրեց հետզհետե խորացող այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն միացյալ Եվրոպայի սկզբնական տեսլականի եւ նրա ներկայիս մեկնա-

բանության միջեւ: Երբ հետպատերազմյան Եվրոպայի քրիստոնեադեմոկրատական քաղաքական ուժերը ծրագրում էին եվրոպական ժողովուրդների ապագա միությունը, նրանց հիմնական ելակետն էր կրոնահոգեւոր միասնության գաղափարը: Հետագայում դրան ավելացավ Դը Գոլի առաջ քաշած «առանձին եվրոպական հայրենիքներից կազմված հզոր միության» տեսլականը: Վերջին տարիներին ԵՄ առանցքային պետությունները՝ Ֆրանսիան ու Գերմանիան, սկսեցին մտածել այդ կազմակերպությանը ժամանակակից աշխարհում որոշակի աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական առումներով որոշումներ ընդունող կենտրոնի կարգավիճակ հաղորդելու մասին, ինչը նախատեսում էր մի կողմից՝ միության ընդլայնում դեպի Արեւելք եւ մյուս կողմից՝ ինտեգրման ավելի բարձր մակարդակ ու պետական ինքնիշխանության որոշ ատրիբուտների փոխանցում ԵՄ կառույցներին: Այդ ոգով նախապատրաստվեց ԵՄ սահմանադրությունը, որը նախատեսում է, մասնավորապես, միասնական անվտանգության ու արտաքին քաղաքականության իրականացում ԵՄ անդամ պետությունների կողմից: Ֆրանսիայի բնակչության կողմից ԵՄ սահմանադրության մերժումն ուժեղ հարված էր այդ մոտեցման կողմնակիցներին:

Միանգամից ակտիվացան այլընտրանքային մոտեցման կողմնակիցները՝ Մեծ Բրիտանիայի ղեկավարությամբ, որոնք մինչ այդ փոքրամասնություն էին: Նրանք գտնում են, որ ԵՄ հիմքում պիտի դնել տնտեսական շահի գաղափարը, այդպիսով, ըստ էության, վերածելով այն ազատ առևտրի գոտու, որի մասնակիցները հետեւում են խաղի որոշակի կանոնների, մասնավորապես՝ հարգում են օրենքի գերակայության սկզբունքը, մարդու եւ փոքրամասնությունների իրավունքները: Այդ մոտեցումն անիրատես է համարում միասնական անվտանգության ու արտաքին քաղաքականության իրականացումը եւ հրաժարվում է ճանաչել հոգեւոր արժեքների գերակա դերը: Այս մոտեցման շրջանակներում հիանալի տեղադրվում է Թուրքիայի լիիրավ անդամակցությունը Եվրամիությանը:

Չի կարելի հաշվի չառնել մեկ այլ հանգամանք եւս: Բրիտանական դիվանագիտությունը երբեք չահագրգռված չի եղել, որ ցամաքային Եվրոպայում գերիշխի միասնության գաղափարը, քանզի համարել է, որ այդ դեպքում վտանգված կլինի նրա անվտանգությունը: Եթե այս տեսանկյունից դիտարկենք ներկա գործընթացները, ապա պարզ է դառնում, որ Մեծ Բրիտանիայի համար ձեռնտու է Թուրքիայի ներկայությունը ԵՄ-ում, քանի որ այդպիսով նվազում է ֆրանս-գերմանական առանցքի դերն այդ կազմակերպությունում: Ինքնին հասկանալի է, որ այդ մոտեցումը կիսում է նաեւ ԱՄՆ-ը, որը շահագրգռված չէ, որպեսզի ԵՄ-ը

նույնիսկ ենթադրյալ հնարավորություն ստանա հարցականի տակ դնելու միաբեւեռ աշխարհի համակարգը, ինչը ենթադրում է՝ քաղաքական առումով հնարավորինս թույլ ինտեգրված ԵՄ: Բացի դրանից, ունենալով նրա կազմում թուրքիայի նման դաշնակցի, որը մեծապես կախվածության մեջ է իրենից, ԱՄՆ-ը կարող է ակնկալել ավելի մեծ ազդեցություն ԵՄ-ի վրա: Ամենեւին էլ պատահական չէ, որ ԵՄ նորաթուխ անդամ արեւելաեւրոպական երկրները, որոնք խստորեն հետեւում են ԱՄՆ քաղաքականության ուղեծրին, անվերապահորեն պաշտպանում են թուրքիայի թեկնածությունը:

Թուրքիա. եվրաինտեգրում եւ ներքին պառակտում

Թուրքիայում վերաբերմունքը ԵՄ-ին անդամակցելու նկատմամբ հեռու է միանշանակորեն դրական լինելուց: Սովորաբար նշվում է, որ համաձայն հարցումների՝ երկրի բնակչության միայն երեք չորրորդն է կողմ դրան, ինչն արդեն հաստատում է վերը նշված պնդումը: Սակայն վերջերս հրապարակվեցին այլ տվյալներ, որոնք վկայում են, որ բնակչության միայն կեսից մի փոքր ավելի հատվածն է գտնում, որ Թուրքիայի համար ավելի գերադասելի է անդամակցումը ԵՄ-ին: Այս տվյալները հնարավորություն են տալիս նույնիսկ խոսել Թուրքիայում այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող որոշակի երկփեղկվածության մասին:

Նույնիսկ բանակը, որն ավանդաբար անվերապահորեն աջակցել է երկրի բոլոր արեւմտամետ ձեռնարկումներին, այսօր այս հարցում միակարծիք չէ: Նրա ղեկավարությունը մտավախություն ունի, թե անդամակցելով ԵՄ-ին՝ Թուրքիան ստիպված կլինի սահմանափակել զինվորականների ղեկավար դերակատարումը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաեւ նրան կարգելվի ուժ կիրառել քուրդ ապստամբների դեմ:

Այս հարցում, ըստ էության, պառակտված է նաեւ կառավարող իսլամամետ Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), որի ղեկավարությունն իր քաղաքական ապագան կապել է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցի դրական լուծման հետ: Հոկտեմբերի 3-ին, երբ եվրոպական երկրների արտգործնախարարները լարված մթնոլորտում քննարկում էին Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու մասին փաստաթղթի տարբերակները, էլ ավելի շիկացած մթնոլորտ էր տիրում այդ կուսակցության մի խումբ առաջատար անդամների՝ վարչապետ եւ ԱԶԿ առաջնորդ Ռ.Թ. Էրդողանի հետ հանդիպմանը: Մասնակիցներից շատերը սպառնում էին դուրս գալ ԱԶԿ շարքերից, եթե Թուրքիան

համաձայնի բանակցություններ սկսել ԵՄ-ի հետ վերը նշված փաստաթղթում առաջադրված սկզբունքների հիման վրա: Միայն կիրառելով քաղաքական ճարտարության իր հարուստ գինանոցը՝ Երդողանին հաջողվեց փրկել ԱԶԿ-ն պառակտումից: ԱԶԿ շարքերում ԵՄ անդամակցության կողմնակիցները գտնում են, որ այդ դեպքում հնարավոր կլինի առավելագույնս օգտվել նախատեսվող հետագա ժողովրդավարական բարեփոխումներից եւ վերացնել հանրապետության հիմնադիր քենալականների կողմից մտցված սահմանափակումները իսլամի նկատմամբ, իսկ նրանց ընդդիմախոսները, ընդհակառակը, պնդում են, որ անդամակցության դեպքում մահմեդական թուրքիան կհայտնվի քրիստոնեական Եվրոպայի ազդեցության ներքո:

Երկրի այլ խոշոր քաղաքական ուժերից՝ քենալականներին ներկայացնող ժողովրդա-հանրապետական կուսակցությունը նույնպես դեմ է այդ փաստաթղթի հիման վրա բանակցություններ սկսելուն, իսկ ազգայնամոլական ու պանթուրքիստական Ազգայնական շարժումն ու ծայրահեղ իսլամամետ Երջանկության կուսակցությունն անվերապահորեն դեմ են ընդհանրապես ԵՄ-ին անդամակցելուն: Ազգայնականների բացասական մոտեցումը ԵՄ անդամակցության խնդրին պայմանավորված է մտավախությամբ, թե քրդերը, օգտվելով ԵՄ պահանջած ժողովրդավարական բարեփոխումներից, նախադրյալներ կստեղծեն Թուրքիայից անջատման ու անկախության ձեռքբերման համար: Նրանք չեն բացառում, որ ԵՄ-ը կարող է ճնշում գործադրել Թուրքիայի վրա նաեւ Հայկական հարցում՝ ստիպելով նրան գնալ միակողմանի զիջումների: Եվ բարձրագույն զինվորականությունը, եւ ազգայնականները դեմ են որեւիցե զիջման Կիպրոսի հարցում: Նրանք գտնում են, որ թուրքական զորքերը պիտի մնան այնտեղ, քանի որ այդպիսով Թուրքիան ապահովում է իր գերակշռող դիրքը արեւելյան Միջերկրածովյան տարածաշրջանում:

ԵՄ անդամակցության անվերապահ կողմնակիցներն են թուրքական կապիտալի այն հատվածների ներկայացուցիչները, որոնք սերտաճած են Եվրոպական կապիտալի հետ: Այն ունի իր բազմաթիվ կողմնակիցները նաեւ բնակչության ամենալայն շրջաններում, որոնք հույս ունեն, թե իրենց համար հնարավորություններ կբացվեն ապրել ու աշխատել Եվրոպայում:

Ներկայիս իրադրությունը Թուրքիայում վկայում է, որ քենալականների կողմից առաջ քաշված միատարր պետության ու հասարակության հիմնարար տեսլականը տապալվում է եւ Եվրաինտեգրումը միայն կարագացնի այդ գործընթացը:

Մեր շահերը եւ ակնկալիքները

Մեր շահերը պահանջում են, որ նախքան ԵՄ անդամ դառնալը Թուրքիան ճանաչի Ցեղասպանությունը, բացի սահմանը Հայաստանի հետ եւ ավելի ընդհանուր առումով՝ հրաժարվի Հայաստանի նկատմամբ վարվող «հարկադրման» քաղաքականությունից:

ԵՄ անդամ երկրների ղեկավարները, ԵՄ տարբեր կառույցների ներկայացուցիչները բազմիցս հանդես են եկել մեզ համար նպաստավոր հայտարարություններով, Եվրախորհրդարանն ընդունել է մեզ համար նպաստավոր բանաձեւեր, սակայն ԵՄ-Թուրքիա բանակցությունների ընթացքը նախանշող փաստաթղթում Հայաստանի հետ ուղղակի առնչություն ունեցող որեւիցե դրույթ, ի տարբերություն Կիպրոսի, գոյություն չունի: Այդ տեսանկյունից, թերեւս, կարող է մեզ համար նշանակություն ունենալ միայն փաստաթղթի այն դրույթը, որը պահանջում է, որպեսզի Թուրքիան բարելավի հարաբերությունները հարեւանների հետ: Դա նշանակում է, որ ԵՄ-ն այդ խնդիրներն այսօր առաջնային չի համարում:

Հետաքրքիր կլիներ համեմատություն անցկացնել 19-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի Հայկական հարցի դիվանագիտական դրսեւորումների հետ: Եվ պիտի խոստովանել, որ զուտ ձեւական-վավերագրային տեսանկյունից այն ժամանակվա իրավիճակն ավելի բարենպաստ էր հայության համար, քանի որ Հայկական հարցի լուծման անհրաժեշտությունը, չնայած եւ խիստ աղճատված ու փաստորեն խեղաթյուրված տեսքով՝ Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների անհրաժեշտության հիմնադրույթի ձեւակերպմամբ տեղ գտավ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում՝ սկսած Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերից, որոնց տակ կար նաեւ Օսմանյան կայսրության ստորագրությունը:

Մեր օրերում գոյություն չունի որեւիցե միջազգային իրավական փաստաթուղթ, որի տակ լինել Թուրքիայի ստորագրությունը եւ համաձայն որի՝ նա Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու որեւիցե ուղղակի պարտավորություն ստանձներ: Ցավոք, Եվրոպական առաջնորդների հայտարարությունները չարտացոլվեցին նույնիսկ վերը նշված փաստաթղթում, որը, փաստորեն, ԵՄ պահանջների ցանկն է Թուրքիային, իսկ Եվրախորհրդարանի որոշումները ԵՄ անդամ երկրների համար ունեն միայն խորհրդատվական բնույթ:

Սակայն ներկայիս իրադրությունում մենք ունենք կարելորագույն, սկզբունքային բնույթի առավելություն մեր նախնիների նկատմամբ: Դա

ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունն է, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել սկզբունքորեն այլ, շատ ավելի բարձր մակարդակի քաղաքականություն միջազգային թատերաբեմում: Եթե սրան ավելացնենք կազմակերպված ու նպատակասլաց գործող եվրոպական Սփյուռքը, ապա կարելի է ակնկալել, որ համապատասխան խոհեմության ու ճկունության, ինչպես նաև արդյունավետ նախապատրաստական աշխատանքի դեպքում, որի կարելու բաղկացուցիչ մասը պիտի կազմի լրբբիստական աշխատանքը եվրոպական մայրաքաղաքներում, հնարավոր կլինի մեր պահանջները Թուրքիայի նկատմամբ դարձնել ԵՄ պահանջների մի մաս:

Ինչ խոսք, այդ նպատակի իրականացման հավանականությունը թվում է ոչ այնքան մեծ: Սակայն մենք ունենք ամենաքիչը տասը տարի, քանի որ այդքան են առնվազն շարունակվելու ԵՄ-Թուրքիա բանակցությունները, իսկ դա քիչ ժամկետ է: Դրա երկընտրանքը՝ փորձել Թուրքիայի հետ երկկողմանի բանակցությունների միջոցով կարգավորել մեր խնդիրները, կտանի դեպի փակուղի, քանի որ այդ երկրի վերնախավը դեռևս չի ցուցաբերում որեւիցե նախանշան՝ փոխելու իր կոշտ, արհամարհական դիրքորոշումը Հայաստանի ու հայության նկատմամբ:

ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ Գազիկ Տերտերյան

Միջուկային զենքի տարածման խնդիրը ներկայումս խիստ հրատապ է դարձել: Ինչպես նշվում է բրիտանական հակահետախուզության (MI5) վերջերս հրապարակված զեկույցում, Իրանի, Յնդկաստանի, Իսրայելի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Սիրիայի եւ Եգիպտոսի ավելի քան 360 մասնավոր ընկերություններ, գիտական եւ կառավարական կազմակերպություններ տիրապետում են այն միջուկային տեխնոլոգիաներին ու նյութերին, որոնք կարող են օգտագործվել միջուկային զենքի մշակման համար: Այդ, ինչպես նաեւ առկա այլ տեղեկատվությունների համախումբը վկայում է, որ աշխարհում եղած 8 միջուկային տերություններին մոտ ապագայում կարող են միանալ նաեւ այլ երկրներ, որոնք աշխատում են սեփական միջուկային զենք ստեղծելու ուղղությամբ: Նման գործընթացին նպաստում են երկու հանգամանք: Առաջինը արդի գիտատեխնիկական հնարավորությունների եւ մակարդակի ընդհանուր բարձրացումն է, ինչը մեծացնում է գերիզոր զենք ձեռք բերելու գայթակղությունը: Երկրորդը ԱՄՆ «հակահարկաբեկական» ռազմավարությամբ պայմանավորված գլոբալ անկայունությունն է. ստեղծված իրավիճակում որոշ երկրներ իրենց ինքնիշխանության պաշտպանության միակ գրավականը համարում են սեփական միջուկային զենքը:

Վերոհիշյալի համատեքստում՝ Իրանի միջուկային ծրագիրը եւ դրա հետ կապված հայտնի գործընթացներն այսօր վերածվել են միջազգային կյանքի ամենաէական խնդիրներից մեկի: Վերջերս Վիեննայում Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) Կառավարիչների խորհրդի նիստում ընդունվեց ամփոփագիր, համաձայն որի՝

❖ Թեհրանին առաջարկվում է հրաժարվել ուրանի հարստացման ուղղությամբ վարվող աշխատանքներից,

❖ կանգնեցնել Սպահանի միջուկային կենտրոնի աշխատանքները,

❖ թույլ տալ ԱԷՄԳ տեսուչներին՝ առանց սահմանափակումների վերահսկել Իրանի միջուկային օբյեկտների գործունեությունը:

ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի ԵՄ ներկայացուցիչները եւս կողմ քվեարկեցին այդ հակաիրանական ամփոփագրին: Կողմ քվեարկեց անգամ Յնդկաստանը, որի հետ Իրանը բազմամիլիարդանոց պայմանագիր է կնքել գազի մատակարարման վերաբերյալ: 12 պետություն չեզոք

դիրք գրավեցին, այդ թվում՝ Ռուսաստանը եւ Չինաստանը: Դեմ է քվեարկել միայն Վենեսուելան:

Նկատենք, որ միջուկային զենքի մշակումները զգալիորեն դուրս են եկել միջազգային վերահսկողությունից, ինչը խիստ անհանգստացնում է գրեթե բոլոր տերություններին (օրինակ, նման ծրագրեր ունի Սաուդյան Արաբիան, ցանկանում է ԱԷԿ կառուցել նաեւ Թուրքիան, որին այդ հարցում խոստանում է օգնել Իրանը): Միեւնույն ժամանակ, մեծ տերությունները, ելնելով իրենց աշխարհաքաղաքական նկատառումներից, նպաստում են որոշ երկրների միջուկային ծրագրերի իրագործմանը. ժամանակին Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան (ինչը բացահայտվել է միայն վերջերս) օգնել են Իսրայելին դառնալ միջուկային տերություն, իսկ այժմ նույն ձեւով են վարվում Ռուսաստանը եւ Չինաստանը Իրանի պարագայում:

Հակաիրանյան ամփոփագրի ընդունումը ԱՄՆ դիվանագիտական հաղթանակն է: Եթե Թեհրանը չկատարի ԱԷՄԳ որոշումները, ապա դա հիմք է հանդիսանալու, որպեսզի իրանական հարցը տեղափոխվի ՄԱԿ Անվտանգության խորհուրդ (ԱԽ): Անշուշտ, ԱԽ որոշումներ ընդունելու մեխանիզմն այլ է, եւ ԱԽ մշտական անդամները՝ Ռուսաստանը եւ Չինաստանը, ամենայն հավանականությամբ կօգտվեն իրենց վետոյի իրավունքից. այլ պարագայում Իրանի դեմ կկիրառվեն միջազգային պատժամիջոցներ: Սակայն եթե անգամ ԱԽ մշտական անդամներն օգտվեն իրենց վետոյի իրավունքից, ապա այդ դեպքում էլ ԱՄՆ-ը կարող է կրկնել իրաքյան սցենարը, երբ փաստն իսկ, որ հարցն առաջարկվում էր դնել ԱԽ-ում, ինչ-որ տեղ լեգիտիմացրեց Իրաքի օկուպացիան:

Իրանի նոր իշխանությունների համար ԱԷՄԳ որոշումները սկզբունքորեն անընդունելի են: ԱՄՆ գործողությունները ստիպում են Իրանին՝ սեփական միջուկային զենք մշակել եւ պատրաստվել կոշտ հակահարվածի: Հարկ է նաեւ նշել, որ միջուկային խնդրում անզիջում դիրքորոշումը եւ այդ հարցի միջազգայնացումը պայմանավորված է Իրանի ձգտումով՝ լեգիտիմացնել իր միջուկային տերություն լինելու փաստը: Թեհրանում արդեն սկսվել են հանրային ընդվզումները Արեւմուտքի նկատմամբ, իսկ մեջլիսը որոշում է ընդունել դուրս գալ Միջուկային զենքի չտարածման պայմանագրից (թեեւ, խորհրդարանի նման որոշումը պարտադիր չէ գործադիրի համար):

Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ ԱԷՄԳ որոշումները Թեհրանի կողմից չեն կատարվելու, ինչը կարող է հանգեցնել ԱՄՆ-Իրան զինված հակամարտության: Որոշ վերլուծաբաններ կարծում են, որ այն կարող է սկսվել արդեն 2006-ի ամռանը: Սակայն նման սցենարի ժամկետները

դժվար է կանխորոշել, եւ դա առաջին հերթին կախված է Իրաքում տիրող իրավիճակից: Ամերիկյան զինուժի մի զգալի մասը զբաղված է այդ երկրում, եւ ամերիկացիների ռեսուրսները նոր պատերազմի համար, թերեւս, բավարար չեն:

Սակայն ԱՄՆ-ը մեծ նախապատրաստական աշխատանքներ է կատարել Իրանի դեմ ուժային գործողություններ իրագործելու ուղղությամբ եւ փորձելու է դրանք իրականացնել հարմար պահին: Դրա վերջին ապացույցներից է Ադրբեջանում, Պենտագոնի «Կասպիական պահակ» ծրագրի շրջանակներում, երկու հզոր ռադիոլուկացիոն կայանների տեղադրման մասին հաղորդագրությունը: Այդ կայանները թույլ կտան վերահսկել ոչ միայն Իրանի, այլեւ Ռուսաստանի օդային տարածքները: Միեւնույն ժամանակ, չի կարելի բացառել, որ մոտ ապագայում հնարավոր է կատարվեն ուժերի գլոբալ վերադասավորումներ, որոնք կհանգեցնեն ԱՄՆ ռազմատենչության նվազմանը:

Պետք է նաեւ ամրագրել, որ Իրանի հարցում ներկայումս ընթանում է ստանդարտ անգլո-ամերիկյան տեղեկատվական խաղ. մի կողմից՝ ամերիկյան անանուն աղբյուրները հայտարարություններ են կատարում Իրանի վրա հարձակման ժամկետների վերաբերյալ, մյուս կողմից՝ բրիտանացիները պետական մակարդակով ժխտում են նման հնարավորությունը (ինչպես դա վերջերս կատարեց Անգլիայի արտգործնախարար Ջեյ Բլեյթը): Այսօրինակ մարտավարությունը խիստ նման է նրան, ինչ ժամանակին կիրառվում էր Իրաքի նկատմամբ:

Բոլոր պարագաներում այսօր Իրանը գտնվում է բավական բարդ կացության մեջ, քանի որ միջուկային ծրագրի խնդրում չիրագործվեցին Թեհրանի այն հույսերը, թե եվրոպական երկրները լռելյայն, իսկ Շանհայի համագործակցության կազմակերպության գործընկերները անմիջական աջակցություն կցուցաբերեն Իրանին միջուկային ծրագրի հարցում:

Որոշ իրանական գործիչների անհանգստացնում է ԱԷՄԳ ղեկավար Էլ Բարադեյին Նոբելյան մրցանակ շնորհելու փաստը: Ըստ նրանց՝ դա փորձ է քաջալերելու այդ միջազգային խոշոր պաշտոնյային, որպեսզի նա շարունակի նույն խստությամբ քննել Իրանի «միջուկային գործերը»:

Իր հերթին ԱՄՆ-ը փորձում է զարգացնել իր նախաձեռնությունը տեղեկատվական դաշտում: Օրինակ, վերջերս Պենտագոնը պաշտոնապես մի նոր հայեցակարգ է ընդունել, համաձայն որի՝ ԱՄՆ-ը իրեն իրավունք է վերապահում կանխարգելիչ միջուկային հարվածներ հասցնել հավանական վտանգ ներկայացնող երկրներին: Այդ նպատակով մշակվում են համեմատաբար փոքր հզորության մարտազլխիկներ: Ենթադրվում է, որ դրանք պետք է ի վիճակի լինեն թափանցելու տասնյակ

մետրեր գետնի տակ եւ այնտեղ պայթելով՝ ոչնչացնեն բունկերներուն տեղակայված հակառակորդի միջուկային մարտագլխիկներով հրթիռները եւ հրամանատարական հանգույցները: Մինչդեռ, ինչպես վկայում են վերջերս Յուսիսային Կորեայի միջուկային ծրագրի շուրջ զարգացումների առիթով հարավկորեական փորձագետների կատարած հետազոտությունները, անգամ այդպիսի փոքր հզորության «լուկալ» միջուկային հարվածները կարող են հանգեցնել հունանիտար եւ էկոլոգիական աղետի:

Իրանի շուրջ զարգացումները խիստ վտանգավոր են նաեւ Չայաստանի համար. տեսականորեն բացառված չէ, որ մեր անմիջական հարեւանությամբ կարող է բռնկվել միջուկային պատերազմ: Ճիշտ է, վերլուծաբանների մեծամասնությունն այն կարծիքին է, որ Իրաքյան հիմնախնդրի մեջ «խրված» ԱՄՆ-ը դժվար թե փորձի Իրանի դեմ ուղղակի ռազմական ինտերվենցիա (այն էլ միջուկային զենքի կիրառումով) կազմակերպել, սակայն որքան էլ փոքր լինի նման սցենարի հավանականությունը, այն պետք է թելադրի ՉՉ բարձրագույն իշխանություններին՝ մշակել համապատասխան ծրագրեր նման արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու համար:

**ՊԱՅՔԱՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Դավիթ Հովհաննիսյան**

Միավորված Ազգերի Կազմակերպության բարեփոխումների հիմնահարցն արդի միջազգային հարաբերությունների ամենակարեւոր եւ, միաժամանակ, ամենախնդրահարույց իրողություններից է:

Վերջինս հատկապես հրատապ է դարձել այն պահից, երբ Միացյալ Նահանգներն սկսեց իրականացնել «ազատության եւ ժողովրդավարության զարգացմանը, համաշխարհային անվտանգության ամրապնդմանն ու պաշտպանությանն» ուղղված միանձնյա գործողություններ, որոնց ամենավառ եւ մարտահրավեր նետող դրսեւորումն էր Իրաք ամերիկյան բանակի ներխուժումը:

Փաստորեն, դրանով բախվում են համաշխարհային նոր համակարգի վերաբերյալ երկու իրարամերժ պատկերացումներ. «միաբեւե՞ռ», այսինքն՝ ամերիկյան, թե՞ «բազմաբեւեռ» կառավարում կամ, ավելի ճիշտ, հավաքական պատասխանատվություն, որի կողմնակիցներն են, բացի ԱՄՆ-ից եւ իր մերձավոր դաշնակից երկրներից, կարելի է ասել՝ մնացած բոլոր պետությունները:

Այստեղից էլ Միացյալ Նահանգների՝ ՄԱԿ-ի հետ հաշվի չնստելու ձգտումը, որն արտահայտվեց նաեւ այնպիսի փաստով, ինչպիսին էր, օրինակ, ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչ նշանակելը մի անձնավորության, որն անթաքույց արհամարհում է այդ կազմակերպությունը:

Անշուշտ, նախագահ Ջ.Բուշի վարչակազմի քաղաքականությունը ՄԱԿ-ի հանդեպ ավելի զգուշավոր բնույթ ընդունեց նրանից հետո, երբ Եվրամիության առաջատարներ Գերմանիան եւ Ֆրանսիան, Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը, իսլամական աշխարհը ներկայացնող մի շարք պետություններ կոշտ կերպով ընդդիմացան Միացյալ Նահանգների կողմից միջազգային իրավունքի նորմերի խախտումով Իրաք ներխուժելուն:

Սակայն, չնայած դրան, ԱՄՆ-ը շարունակում է իրականացնել իր համաշխարհային առաջնորդության ամրապնդմանն ու միանձնյա կառավարմանն ուղղված քաղաքականությունը, որի էական մասն է կազմում ՄԱԿ հեղինակագրկումը կամ էլ վերջինիս որպես գործիք օգտագործելը, ինչը, ամենայն հավանականությամբ, ավելի դյուրին

խնդիր է դարձել Եվրամիության ներսում ծագած հարցերի պատճառով:

Այս խնդրում Միացյալ Նահանգներն ակտիվորեն օգտագործում է այնպիսի հզոր գինանոց, ինչպիսին են ամերիկյան հսկողության տակ գտնվող զանգվածային լրատվության միջոցները, որպեսզի համոզի համաշխարհային հանրությանը, որ ՄԱԿ-ն իր դարձն ապրել է, թույլ եւ անշարժունակ, բյուրոկրատացած եւ կոռումպացված կազմակերպություն է:

Վաշինգտոնն այն իրականացնում է մեծ հաջողությամբ, ուստի գրեթե որպես անակնկալ է գնահատվում ՄԱԿ Գլխավոր քարտուղարի կողմից ստեղծված «Բարձր մակարդակի խմբի» վերջերս հրապարակած փորձագիտական եզրակացությունը, որը, նշելով այս միջազգային կազմակերպության գործունեության մեջ տեղ գտած բազմաթիվ թերություններ, այնուամենայնիվ, գտնում է, որ «Միավորված Ազգերի Կազմակերպության հաջողությունները՝ աշխարհում խաղաղությանը եւ անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգների վերացման գործում, շատ ավելի նշանակալից են, քան դա ընդունված է համարել»:

Նշենք, որ այս խմբի անդամներ են չորս նախկին վարչապետեր, համաշխարհային հանրության շրջանակներում չափազանց բարձր վարկանիշ ունեցող Միջազգային ճգնաժամային հանձնաժողովի նախագահը, տարբեր երկրների նախկին արտգործնախարարներ եւ բարձրաստիճան դիվանագետներ եւ, ինչը կարելու է ընդգծել, Ջ.Բուշ-ավագի նախագահության օրոք ազգային անվտանգության գծով խորհրդական, գեներալ Բ.Սքոուքրոֆթը:

ՄԱԿ-ն, այսպիսով, օգտագործելով իր համար հասանելի հնարավորությունները, փորձում է դիմադրել եւ պայքարում է իր դերի կարելորդան ու այնպիսի բարեփոխումների իրականացման համար, որոնք կնպաստեն կոլեկտիվ կառավարման համակարգի ձեւավորմանը:

Պայքարն աստիճանաբար ավելի ու ավելի թեժ բնույթ է ստանում, ուստի ժամանակի լրջագույն հարցերից է այն, թե ինչպիսին կլինի համաշխարհային կառավարման համակարգը կամ, ավելի ընդհանրական ձեւակերպմամբ, ինչ տեսք կունենա նոր իրողություններին համապատասխանող աշխարհակարգը:

Այս առումով շատ կարելու է այն գործընթացները, որոնք ներկայումս տեղի են ունենում Միացյալ Նահանգների հասարակության ներսում, քանի որ ամերիկյան քաղաքացիների կողմնորոշումից է զգալիորեն կախված ամերիկյան ներկայիս վարչակազմի քաղաքական գիծը:

Հասարակության տրամադրությունների եւ միտումների վերլուծության տեսանկյունից հետաքրքիր է, որ ամերիկյան ինտելեկտուալների

շրջանակից միայն հիմա է դուրս գալիս եւ հասարակական լայն շրջանակների քննարկման ու քննադատության առարկա դառնում Միացյալ Նահանգների՝ 1990-ականներից սկսած մղվածությունը՝ աշխարհում հզորագույն իր ռազմական ուժն օգտագործել «կանխարգելիչ ռազմական միջամտություն» անվան տակ:

Մեկը մյուսի հետեւից հրապարակվում են իրաքյան պատերազմը եւ Միացյալ Նահանգների քաղաքականությունը քննադատող հոդվածներ: Հասարակ ամերիկացիները, որոնք սովորաբար իրենց չեն ծանրաբեռնում նման հարցերով, սկսում են գիտակցել, որ Իրաքում եւ Միջին Արեւելքում իրավիճակը զարգանում է շատ վտանգավոր ուղղությամբ:

Բացի այդ, մինչ օրս Իրանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության դեմ քննադատական կարծիքներ խիզախում էին հայտնել միայն եզակի ինտելեկտուալներ, ինչը կտրուկ կերպով փոխվել է ներկայումս:

Դա իր արտահայտությունն է գտնում մի շարք կենտրոնական թերթերում եւ ամսագրերում հրապարակվող հոդվածներում եւ իրար հետեւից լույս տեսնող մեծագրություններում, որոնք մեղադրում են նախագահ Բուշի վարչակազմը երկակի կամ բազմակի ստանդարտներ կիրառելու համար. օրինակ, նշվում է, որ ամերիկյան կառավարությունը, միաժամանակ, հսկայական ճնշում է բանեցնում Իրանի վրա՝ ձգտելով կանխել այս երկրում միջուկային զենքի ստեղծումը, պայմանագիր է կնքում միջուկային ծրագրերում Հնդկաստանին օժանդակելու վերաբերյալ, քանի որ այս երկիրն անհրաժեշտ է ԱՄՆ-ին՝ որպես դաշնակից Միջին Արեւելքում ծավալվող իրադարձություններում եւ, այդ ամենին զուգընթաց, շատ զգուշավոր քաղաքականություն է վարում միջուկային զենք արդեն իսկ ձեռք բերած Հյուսիսային Կորեայի նկատմամբ:

Հասկանալի է, որ ստեղծված պայմաններում, երբ Իրաքը շարունակում է անկառավարելի մնալ, իսկ դիմադրությունն աստիճանաբար ավելի ու ավելի լուրջ բնույթ է կրում, նախագահ Բուշը, որը շարունակում է պնդել, թե «Ամերիկան չի փոխելու իր ուղին եւ ազատություն է շնորհելու Իրաքին», քննադատվում է նույնիսկ այն վերլուծաբանների եւ քաղաքականության մեջ լուրջ հեղինակություն ունեցող մարդկանց կողմից, որոնք մինչեւ պատերազմի սկիզբը գտնում էին, որ «կանխարգելիչ ռազմավարությունը ճիշտ է» եւ «լիակատար մարդասիրական ինտերվենցիան արդարացված է»:

Եթե այս ամենին գումարենք ավերիչ «Կատրինա» փոթորկի հետեւանքները եւ այն քննադատությունը, որին ենթարկվեց նախագահ Բուշի վարչակազմը՝ ոչ համարժեք գործողությունների համար, ապա հասկանալի կդառնան վերջերս հրապարակված հարցախույզի արդյունք-

ները, որոնք նախագահ Ջորջ Բուշ-կրտսերի կառավարման ընթացքում առաջին անգամ գրանցել են, թե նրա գործունեությունն ունի թվով ավելի քիչ կողմնակիցներ (42,2%), քան հակառակորդներ (53%):

Այս արդյունքներին անմիջապես արձագանքեց Ջ.Բժեզինսկին՝ «Լոս Անջելես Թայմսում» հրապարակելով մի հոդված, որը սկսում է Առնոլդ Թոմբրիի հայտնի խոսքերով. «Ցանկացած կայսրության կործանման պատճառ, վերջին հաշվով, դառնում են նրա առաջնորդների ինքնասպանական գործողությունները»:

Ջ.Բժեզինսկին, որի կարծիքները միշտ էլ որոշիչ դեր են խաղացել ամերիկյան արտաքին քաղաքականության եւ հասարակական կարծիքի ձեւավորման մեջ, Միացյալ Նահանգների վերջին շրջանի անհաջողությունները կապում է «երկրի բարձրագույն ղեկավարների նեղ շրջանակի» որոշումների եւ գործունեության հետ: Սակայն, մեր տեսակետից, հարցը միայն սուբյեկտիվ պատճառներով անհնար է պարզաբանել:

Բանն այն է, որ ամերիկյան հասարակությունն այս վերջին տարիների ընթացքում ինքն է շատ փոխվել: Այն աստիճանաբար դառնում է, ինչպես նշում են իրենք՝ ամերիկացիները, «ամենառազմականացվածը ժողովրդավարական հասարակությունների մեջ»:

Մի շարք հայտնի քաղաքական վերլուծաբաններ մեղադրում են ամերիկյան ռազմական ղեկավարությանը՝ երկրի ավելի ու ավելի միլիտարիզացված դառնալու համար:

Սա, անշուշտ, ճիշտ է, սակայն հարցի միայն մի կողմն է:

Սառը պատերազմի ավարտից եւ «չարի կայսրության» կործանումից հետո գոյացավ գաղափարական վակուում (*երկբեւեռ աշխարհի կառուցվածքը ինքնըստինքյան թելադրում է աշխարհայեցողության մանիքեական սկզբունքով ձեւավորում, որը հիմնված է Աստծո եւ Սատանայի, Բարու եւ Չարի անվերջ ու անզիջում պայքարի գաղափարի վրա, ինչից բխում է, որ «ով Աստծո հետ չէ, նա Սատանայի ծառան է»:* Բնականաբար, յուրաքանչյուր կողմն իրեն է հայտարարում Աստված: Այստեղից՝ Ռոնալդ Ռեյգանի հայտնի «չարի կայսրություն» ձեւակերպումը, որը սառըպատերազմյան ժամանակաշրջանի դիցաքաղաքական մտածողության կարեւորագույն տարրերից էր). շատ ամերիկացիների մոտ տպավորություն ստեղծվեց, որ բոլոր էական խնդիրները լուծվել են, ազատությունը հաղթանակել է, իսկ ժողովրդավարության դրոշակակիր Ամերիկան արագորեն կապահովի վերջինիս տարածումն ամբողջ աշխարհում:

Սակայն շատ արագ պարզ դարձավ, որ «ժողովրդավարության տարածողի» դերում հանդես գալու համար անհրաժեշտ է այնպիսի դիցա-

գաղափարական համակարգ, որն իր բոլոր դիցույթներով եւ ծեսերով ամրապնդի այս ֆունկցիան, իսկ դրա համար նորից պետք է դիմել հնագույն միֆոլոգեմի՝ Բարու եւ Չարի պայքարի մարմնավորում հանդիսացող առասպելական հերոսների որոնմանը: Հասկանալի է, որ Չարի դեմ պայքարը հասարակ քաղաքացիներից պահանջում է՝ մերվել իրենց իրավունքների որոշ, աստիճանաբար ավելի ու ավելի լուրջ բնույթ ստացող սահմանափակումների հետ: Հասկանալի է նաեւ, որ Չարի դեմ պայքարելու համար պետք է շատ լավ զինված լինել: Կասկածից վեր է, որ հենց գեներալներն են, որ գիտեն, թե ինչպես է պետք պայքարել այդ Չարի դեմ եւ, իհարկե, նրանց է հայտնի Չարի կոնկրետ տեղը եւ այլ նման պարզ ու հասկանալի բաներ:

Սկզբում՝ Ս.Հանտինգտոնի «քաղաքակրթությունների բախման» տեսությունը, ապա՝ սեպտեմբերի 11-ի իրադարձությունները թվում էր, թե լրացրին վերը նշված գաղափարական բացը: Սակայն իրաքյան պատերազմի իրողությունները, Գուանտանամոյի եւ Աբու Գրեյբի ցնցող պատկերները շատ արագ դրդեցին ամերիկյան հասարակությանը նահանջել դեպի սովորական ամերիկացու համար ավանդաբար «խաղաղ նավահանգստի» դեր կատարող «շառից հեռու» մտածելակերպը՝ իզոլացիոնիզմը:

Այս վերջինը, անշուշտ, դեռ միտում է, բայց մի բան պարզ է՝ «ահաբեկչության դեմ պատերազմն» այն միֆոլոգեմը չէ, իսկ «Ուսամա բեն Լադեն» կամ «ալ-Կաիդա» պայմանական անվանումներով Չարի մարմնավորումները չեն կարող փոխարինել մարդկանց գիտակցության մեջ «չարի կայսրություն» դիցույթը, ուստի երկրի եւ հասարակության միլիտարիզացման, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների նվազման, երկակի ստանդարտների կիրառման համար դրանք իրական արդարացումներ չեն կարող լինել:

Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ թեւեւ ԱՄՆ-ը զգալիորեն զիջում է Եվրամիությանն իր արտահանման եւ ներկրման ցուցանիշներով, իսկ Չինաստանին՝ տնտեսության զարգացման աճի տեմպերով, այն շարունակում է մնալ չափազանց հարուստ եւ հզոր պետություն՝ աննախադեպ դինամիկ եւ ճկուն տնտեսությամբ եւ բարձր տեխնոլոգիաներ արտադրելու բացառիկ ունակությամբ:

Անշուշտ, բոլոր կայսրությունները ժամանակին փլուզվում՝ պատմություն են դառնում: Եվ դա տեղի է ունենում նաեւ այն պատճառով, որ նրանք շատ հաճախ հաշվի չեն առնում բնության կարելորագույն սկզբունքներից մեկը՝ ազդեցությունն առաջացնում է հակազդեցություն, ուժի կիրառումը՝ պատասխան ուժ: Ընդ որում, հակազդեցությունը գալիս

է այն կողմից, ուր ուղղված է ազդեցության վեկտորը: Սա նշանակում է, որ ԱՄՆ վերջին տարիների քաղաքական վեկտորները դեպի ներս՝ քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները սահմանափակող, եւ դեպի դուրս՝ այլ երկրների եւ հասարակությունների իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող, կյանքի եւ կոչել հակառակ ուղղությամբ գործող փոխազդեցություններ:

Սակայն կարելի է ենթադրել, որ «կղզիական» մտածելակերպը, որը միշտ էլ եղել է ամերիկացիների առավելությունը, այժմ էլ թույլ կտա օվկիանոսն օգտագործել որպես «բուֆեր»՝ նոր դիցաքաղաքականություն ձեւավորելու նպատակով ժամանակ շահելու համար:

Իսկ աշխարհում միակ գերիշխող ուժի գոյության պայմաններում, որքան էլ դա բարդ եւ խնդրահարույց լինի, բնականորեն իրականացվելու է միաբեւեռ կառավարում: Հարցն այն է, թե կլինեն արդյոք ամերիկյան հասարակության առաջնորդներն այնքան իմաստուն, որ այդ կառավարումն ավելի քողարկված եւ ճկուն ձեւով իրականացնեն:

**ՄԵԾ ՄԵՐԾԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ
«ԱԶԱՏ ՄԱՅՐՈՒՂՈՒ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Սուրեն Սարյան**

Վերջին տարիների ընթացքում միջազգային քաղաքականության եւ անվտանգության գծով հետազոտությունների եւ հետազոտողների ուշադրության կենտրոնում մշտապես գտնվել եւ մնում է Մերձավոր եւ Միջին Արեւելքի կամ Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանը, որը բնութագրվում է նաեւ որպես «Գլոբալ Բալկաններ» (Ջ.Բժեզիսկի): Այստեղ են կենտրոնանում համաշխարհային մշակակության արդի գրեթե բոլոր մարտահրավերները:

Բուն «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագիրն առաջ քաշվեց դեռեւս 1990-ական թթ. կեսերին՝ Ջորջ Բուշ-ավագի մտերիմ զինակից Ջեյմս Բեյքերի Յրապարակային քաղաքականության ինստիտուտի նախաձեռնությամբ: Այն նախատեսում էր Մերձավոր եւ Միջին Արեւելքի հենքի վրա աշխարհաքաղաքական նոր գերտարածաշրջանի ստեղծում, որի մեջ էին ընդգրկվում Կենտրոնական Ասիան, Հարավային Կովկասը, Մերձավոր Արեւելքի արաբական երկրները եւ Իսրայելը, Թուրքիան, ինչպես նաեւ Իրանը, Աֆղանստանը, Պակիստանն ու Հյուսիսային Աֆրիկան: Որոշ քայլեր այդ նախագծի իրականացման համար կատարվեցին՝ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման, Իրանի հետ հարաբերությունների մեղմացման, Կասպիական ավազանում էներգետիկ ծրագրերի վրա ուշադրության տեսքով: Սակայն միայն 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծի իրականացումը մտավ ակտիվ փուլ, եւ Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմը հանեց այն հրապարակային քաղաքականության դաշտ: Այդ ժամանակվանից Միացյալ Նահանգները նախաձեռնեց եւ մինչ օրս վարում է Մեծ Մերձավոր Արեւելքում բազմակողմանի եւ բազմաչափ աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական խաղ:

Այսօր Միացյալ Նահանգները նպատակաուղղված ստեղծում է «ազատ մայրուղի» (*freeway*), որը տարածվում է Բալկաններից մինչեւ Չինաստանի սահմանները, որտեղ անխափան կարող է տեղափոխել իր ռազմական, տնտեսական, վառելիքային ուժերը եւ պաշարները, որտեղ չի կարող գոյություն ունենալ իրեն հակառակվող որեւէ վարչակարգ եւ որտեղ ամերիկյան գերակայության հաստատումը բխում է ինչպես Մեծ

Մերձավոր Արեւելքում անվտանգության ապահովման եւ ահաբեկչության վերացման, այնպես էլ համաշխարհային Ամերիկյան կայսրության ստեղծման տրամաբանությունից: Քայլ առ քայլ ամերիկացիները մաքրում են «ֆրիվելդը»՝ սկսելով Հարավսլավիայից, ապա անցնելով արաբա-իսրայելական հակամարտության կարգավորմանը (այլ հարց է, թե ինչ հաջողությամբ), զսպելով Թուրքիային (Իրաքի պատերազմից հետո այս երկրի դերակատարումն աստիճանաբար նվազում է, քանզի պարզվեց, որ ԱՄՆ-ը կարող է իր հարցերը լուծել եւ առանց Աճկարայի), վերացնելով թալիբներին Աֆղանստանում եւ Սադամ Հուսեյնի վարչակարգն Իրաքում, հաստատվելով Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում, հնազանդեցնելով Լիբիան, Եվրոպացիների հետ միասին հարկադրելով Սիրիային իր զորքերը դուրս բերել Լիբանանից, իրականացնելով «գունավոր» հեղափոխություններ սեւծովյան, կովկասյան եւ կենտրոնասիական տարածաշրջաններում: Այս «ազատ մայրուղու» վրա դեռեւս մնում է մեկ խոշոր խոչընդոտ՝ Իրանը: Սակայն այն արդեն վերցվել է աքցանի մեջ, իսկ Լիբանանում «Հեզբալլահի» ազդեցության թուլացումից եւ շուտով Ադրբեջանում ամերիկյան ռազմական ներկայության հաստատումից հետո Իրանը կզրկվի նաեւ Հարավային Կովկասում եւ Միջերկրածովյան ավազանում խուսանավելու հնարավորություններից:

Այս ռազմավարությունն էապես տարբերվում է նախորդ հիսուն տարիների ընթացքում Մերձավոր եւ Միջին Արեւելքում ԱՄՆ քաղաքականությունից, որի էությունը եղել է խուսափել տարածաշրջանային հակամարտությունների մեջ ներքաշվելուց կամ որեւէ տարածաշրջանային պետության ներքին գործերին խառնվելուց:

Այդ մոդելն աշխատում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր: Սակայն արեւմտյան քաղաքակրթության գերիշխանությանն այսօր մարտահրավեր է նետված իսլամական արմատականության կողմից, որի հիմնական օջախները կենտրոնացված են հենց Մեծ Մերձավոր Արեւելքում: Ներխուժելով տարածաշրջան՝ Միացյալ Նահանգները կանխարգելիչ հարվածներ է հասցնում այդ ցանցի օջախներին կամ էլ ուղղում նրա ուժերի ու ռեսուրսների մեծ մասը հենց դեպի մահմեդական աշխարհի ներսը, ինչպես դա այսօր տեղի է ունենում Իրաքում, Եգիպտոսում կամ Պակիստանում:

Հաջող ռազմական գործողությունների համար ամերիկյան զինուժը կարիք է զգում քիչ թե շատ վստահելի եւ կայուն դաշնակից երկրների տարածքի, որտեղ ծրագրում է տեղակայել իր շարժական օդային ռազմակայանները: Թուրքիայում ռազմական ներկայության թուլացման,

Սառույցի Արաբիային չվստահելու եւ Ուզբեկստանից հեռանալու հետեւանքով Միացյալ Նահանգներն ավելի զգայուն է վերաբերվելու դաշնակիցների ընտրությանը: Այդ համատեքստում Միացյալ Նահանգները փաստորեն սկսում է տարածաշրջանում իր աջակցության համար անհրաժեշտ ցանցի ձեւավորումը, որը ներառում է քաղաքական, ռազմական եւ տնտեսական միջոցառումներ: Ուստի, ԱՄՆ ուշադրության կենտրոնում է լինելու տարածաշրջանի երկրներում օդային, ծովային եւ ցամաքային ուղիների ենթակառուցվածքների զարգացման խնդիրը:

Դա նշանակում է, որ «ազատ մայրուղու» ռազմավարության շրջանակներում Միացյալ Նահանգներն աջակցելու է Մեծ Մերձավոր Արեւելքի որոշ պետությունների ուժեղացմանը եւ մյուսների թուլացմանը:

Միեւնույն ժամանակ, ամերիկյան փորձագետները կանխատեսում են, որ Աֆղանստանում քիչ թե շատ խաղաղություն հաստատելուց հետո, Կենտրոնական Ասիայում կառաջանան պայմաններ ամերիկյան ռազմական ներկայության նվազեցման համար եւ աշխարհաքաղաքական նկատառումները, ասել է թե՛ Չինաստանի եւ Ռուսաստանի գործոնները հաշվի առնելու հարցը, կստիպեն Միացյալ Նահանգներին որոշ չափով կրճատել իր ներկայությունը: Դրան զուգահեռ՝ կառաջանա հենց Կասպիական ավազանում ամերիկյան ռազմական ներկայության ուժեղացման խնդիրը, քանզի աշխարհաքաղաքական եւ էներգետիկ գործոնները մեծացնելու են ամերիկյան քաղաքականության մեջ Ադրբեջանի եւ Ղազախստանի կարեւորությունը:

Անշուշտ, դեռեւս ամերիկյան քաղաքականության մեջ կարևորը մնում է Իրաքը: Այն ընտրվեց որպես Մեծ Մերձավոր Արեւելքի առանցքային պետություն, որտեղ փոխելով դրությունը՝ հնարավոր կլինի արմատական փոփոխություններ մտցնել ամբողջ տարածաշրջանում: Իրաքը պետք է կատարի մոտավորապես նույն դերը, ինչ կատարում էր հետպատերազմյան Եվրոպայում Գերմանիան կամ Ասիայում՝ Ճապոնիան: Իհարկե, սա չափազանց լավատեսական եւ իրաքյան ու մերձավորարեւելյան իրողությունների, մեղմ ասած, ոչ համարժեք գնահատական է:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս առանցքային օղակին՝ Իրանին, ապա նրա դեմ ռազմական ակցիան գուցե եւ քիչ հավանական է, սակայն պետք է հաշվի առնել, որ իրանական վարչակարգի փոփոխության համար կարող է պահանջվել բավական երկար ժամանակ, որի ընթացքում ամբողջ տարածաշրջանում եւ նրանից դուրս կարող են սկսվել անդամալի գործընթացներ: Այս գործոնը հաշվի առնելով՝ Միացյալ Նահանգները որոշակի պահի կարող է դիմել ներխուժման:

Ստեղծվող պայմաններում Թուրքիայի եւ Իրանի՝ այդ երկու միջինարեւելյան նախկին կայսրությունների համար նախատեսվում է ավելի նվազ կամ թուլացված աշխարհաքաղաքական դերակատարում: Թուրքիայի «Եվրոպականացումը» (միացումը ԵՄ-ին) եւ Իրանի «արեւմտականացումը» (լինի այն ամերիկյան ներխուժման կամ նոր, արդեն հակակղերական հեղափոխության հետեւանքով) թույլ կտային Միացյալ Նահանգներին եւ Եվրոպային ստեղծել Մեծ Մերձավոր Արեւելքում իրենց «միջնաբերդերը»՝ հանձինս Թուրքիայի, Իրանի, Իսրայելի եւ Հարավային Կովկասի: Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքերն, իրոք, առավել նպաստավոր են՝ տարածաշրջանում ամերիկյան տարանցիկ հենակետեր դառնալու համար: Ավելին, այս երկրներում առկա են ենթակառուցվածքներ, որոնք կարող են օժանդակել ամերիկյան եւ ՆԱՏՕ օդուժին՝ ռազմական գործողությունների ծավալման դեպքում:

Վերջապես, վերոնշյալ «ազատ մայրուղին» ապահովելու է նաեւ Արեւելքից դեպի Արեւմուտք ձգվող հիմնական էներգետիկ մայրուղիների անվտանգությունը, քանի որ, համաձայն ամերիկյան Ազգային էներգետիկ ռազմավարության, Միացյալ Նահանգները պետք է ամեն զնով ապահովի համաշխարհային էներգետիկ հավասարակշռությունը: «Ազատ մայրուղու» իրացումով ԱՄՆ-ը հնարավորություն ունի հսկողություն հաստատել նավթի համաշխարհային պաշարների կեսից ավելիի նկատմամբ: Իսկ այս փաստով Վաշինգտոնն ունակ կլինի հաստատել խաղի իր «կանոնները» աշխարհի մյուս ուժային կենտրոնների համար:

Ամերիկյան արդի քաղաքականության ճարտարապետները, որոնք ընդգրկված են Ջեյմս Բեյքերի Հրապարակային քաղաքականության ինստիտուտում, RAND եւ «Նոր ամերիկյան դար» կազմակերպություններում (արժե հիշատակել փոխնախագահ Դիկ Չեյնիի, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի, պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի, պաշտպանության նախկին փոխնախարար, այժմ Համաշխարհային բանկի նախագահ Փոլ Վուլֆովիցի, Բուշի թիմին մոտիկ կանգնած վերլուծաբաններ Դեւիդ Ֆրանսի, Ռոբերտ Կեյզանի, Ֆրենսիս Ֆուկույամայի, Ուիլյամ Քրիսթոլի, Ջալմայ Հալիլզադի անունները) չեն զլանում նշել, որ ԱՄՆ-ը պետք է իրապես ստանձնի համաշխարհային առաջնորդի անվիճարկելի դերը՝ տարածելով իր ազդեցությունն աշխարհի բոլոր ծայրերում եւ ճնշելով ամերիկյան շահերին եւ հետաքրքրություններին սպառնացող ցանկացած վտանգ՝ ներառյալ պետություններ, միջազգային կառույցներ եւ զանազան խմբավորումներ: Սկզբունքորեն այս տեսակետից չեն տարբերվում ամերիկյան

պետական գործիչներ, նախկին պետքարտուղարներ Յենրի Քիսինջերի, Մադլեն Օլբրայթի, ազգային անվտանգության հարցերով նախագահի նախկին օգնականներ Ջեյմս Բեյզիդևսկու եւ Բրենթ Սքոուլքրոֆթի հայացքները, միայն թե նրանք առաջարկում են գործել այլ՝ ավելի նուրբ մեթոդներով:

Այսօր համաշխարհային կայսրության բեռը, կամա թե ակամա, ընկել է Միացյալ Նահանգների վրա: Այլ խնդիր է, թե ինչքանով են իրենք՝ ամերիկացիներն ունակ ստանձնել այդ բեռը եւ ինչքան ժամանակ ի վիճակի կլինեն կրել այն: Սակայն դա արդեն այլ քննարկման նյութ է:

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ *Արաքս Փաշայան*

Մահմեդական երկրների արտաքին քաղաքականության մեջ իսլամական գործունը շարունակում է կարելոր տեղ զբաղեցնել, ինչի ապացույցն իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) գործունեությունն է:

XXI դար իսլամը մուտք է գործում որպես մահմեդական երկրների ու ժողովուրդների միջեւ համագործակցության եւ առաջընթացի կարելոր նախապայման, իսկ միջիսլամական հարաբերությունների առանցքը շարունակում է մնալ էթնիկ, ռասայական եւ աշխարհագրական պատկանելությունը ժխտող հանրության (կամ իսլամական ազգի)՝ *ուլմայի* գաղափարը: Այս իրողությունը մղում է իսլամական կոնֆերանսին հանդես գալ որպես իսլամական ազգերի կազմակերպություն, որի շրջանակներում մահմեդական պետությունները համագործակցում են ամենատարբեր ոլորտներում: ԻԿԿ-ն աջակցում է մահմեդականներին առնչվող հիմնահարցերի եւ հակամարտությունների լուծմանը, անդամ երկրներում իրականացնում ֆինանսական, սոցիալական, տնտեսական եւ մշակութային տարաբնույթ ծրագրեր, որոնք ներառում են նաեւ ոչ իսլամական պետությունների մահմեդական փոքրամասնությունները:

1969թ. ստեղծված այս կառույցին ներկայումս անդամակցում են 57 իսլամական պետություններ, կազմակերպության նստավայր-գրասենյակը Սաուդյան Արաբիայում է (Ջիդդա): 2004-ից ԻԿԿ գլխավոր քարտուղարը (որն ընտրվում է չորս տարի ժամանակով) մահմեդական աշխարհում բավական համարում ունեցող Թուրքիայի ներկայացուցիչ էքմեչեղդին Իհսանօղլուն է, որը երկար տարիներ ղեկավարում էր Ստամբուլում ԻԿԿ շրջանակներում գործող իսլամական պատմության եւ արվեստի ուսումնասիրության կենտրոնը:

2005թ. հունիսին Սանայում տեղի ունեցած ԻԿԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը մեկ անգամ եւս ակնհայտ դարձրեց միասնական քաղաքականություն իրականացնելու մահմեդական պետությունների ցանկությունը: Սանայի

հռչակագիրը վերստին ի հայտ բերեց այն իրողությունը, որ ԻԿԿ-ն հայտ է ներկայացնում՝ զերծ պահել *ուժման* տնտեսական հետամնացությունից, ներքին տարանջատումից, օտար ազդեցություններից եւ հարձակումներից: Սանայի կոնֆերանսում գլխավոր քարտուղարը մասնավորապես նշեց. «Այսօր մեր հանդիպումը տեղի է ունենում միջազգային բարդ իրողությունների շրջանում, ինչը հակադիր է մեր անցյալին, երբ մեր Ուժման իր ոսկեդարն էր ապրում, երբ նա գլխավոր ուժն էր աշխարհում, գիտության եւ մշակույթի առաջատարը, քաղաքակրթության, հանդուրժողականության եւ տարբեր դավանանքների գոյակցության բնօրրանը: Մինչդեռ այսօր մենք դեմ առ դեմ կանգնած ենք ծանր իրողությունների եւ տարբեր դժվար մարտահրավերների առջեւ, որ սպառնում են մեր տարածքներին, մեր ինքնիշխանությանը, մեր մշակույթին եւ մեր ինքնությանը»:

Սանայի հանդիպումը մահմեդականներին կոչ արեց չանջրպետվել աշխարհի մնացյալ հատվածից, այլ ներդաշնակ քայլել աշխարհի գիտատեխնիկական նվաճումների հետ, գործել չափավորության եւ հանդուրժողականության սահմաններում: Իսլամական երկրների արտգործնախարարները դատապարտեցին ահաբեկչության բոլոր ձևերը, իսլամը ահաբեկչության հետ նույնացնելու փորձերը՝ անհրաժեշտ համարելով տարբերակում մտցնել ահաբեկչության եւ ազատագրական պայքարի միջև: Նշվեց, որ ԻԿԿ-ն այսուհետեւ նույնպես պետք է գործի ի շահ *ուժմայի*, փորձի վերականգնել «նրա երբեմնի փառքն ու գերազանցությունը», որի համար անհրաժեշտ է մահմեդականների միասնականությունը: Սանայի կոնֆերանսն անդրադարձավ մահմեդականների առջեւ ծառայած գրեթե բոլոր սուր եւ հրատապ խնդիրներին, այդ թվում՝ Իրաքի հարցին: ԻԿԿ-ն պահանջեց վերականգնել Իրաքի ինքնիշխանությունը եւ վերջ տալ ամերիկյան օկուպացիային:

Սանայի կոնֆերանսը կարելուրեց կազմակերպության ներսում բարենորոգումների անհրաժեշտությունը, ինչը պետք է վերանայի նրա նպատակները, կառուցվածքն ու գործունեությունը՝ համապատասխան XXI դարի պահանջներին:

ԻԿԿ բարեփոխումների նախաձեռնողներից է նորանշանակ գլխավոր քարտուղարը, որի կարծիքով՝ ընդունված որոշումները շատ հաճախ չեն իրագործվում, ուստի պետք է վերանայվեն գործող մեխանիզմները, օպտիմալ ձևով օգտագործվեն առկա հնարավորություններն ու մարդկային ռեսուրսը, ստեղծվի լիարժեք իրազեկության

մթնոլորտ: Իհսանօղլուն առաջարկում է փոխել նաեւ կազմակերպության անունը:

ԻԿԿ-ն նաեւ առաջ է քաշում ՄԱԿ ընդլայնվող Անվտանգության խորհրդում իսլամական աշխարհի ներկայությունը որեւէ ձեւաչափով ապահովելու գաղափարը:

Իսլամական կոնֆերանսին առնչվող ուշագրավ զարգացումներից մեկն այն է, որ վերջերս կազմակերպության դիտորդի կարգավիճակ ստացավ Ռուսաստանի Դաշնությունը: Որեւէ կերպով կազմակերպությանն անդամակցելու հայտ Ռուսաստանը ներկայացրել էր դեռ 2003թ. օգոստոսին: Այս մասին հայտարարեց Կուալա Լումպուրում ԻԿԿ X գագաթաժողովին հյուրընկալված ՌԴ նախագահ Վ.Պուտինը՝ նշելով, որ Ռուսաստանում 20 միլիոն մահմեդականներ են ապրում, որոնք նրա հիմնարար բնակիչներն են եւ ոչ թե ներգաղթողներ:

Անվիճելի փաստ է, որ ԻԿԿ-ի հետ համագործակցությունը, ցանկացած ձեւաչափով, հնարավորություն կտա Ռուսաստանին լուծել մի քանի հարցեր: Նախ՝ փորձել կարգավորել չէջնական հարցը, ինչպես նաեւ դիմագրավել իսլամական ծայրահեղականության սպառնալիքը: Բացի այդ, ԻԿԿ շրջանակներում մահմեդական պետությունների, հատկապես Ծոցի նավթարդյունաբերող երկրների հետ շփումները Ռուսաստանում մեծ չափերի ներդրումների հնարավորություն կստեղծեն:

Ռուսաստանի հետ որեւէ ձեւով համագործակցությունը ձեռնտու է նաեւ մահմեդական երկրներին, որոնք մի կառույցի մեջ հայտնվում են այն պետության կողքին, որն Անվտանգության խորհրդի եւ Մեծ ութնյակի անդամ է: Միաժամանակ, հազիվ թե բոլոր մահմեդական պետություններին գոհացնի իսլամական այս կարեւոր կառույցում ՌԴ ներկայությունը:

Ինչեւէ, Սանայի կոնֆերանսում Ռուսաստանը ստացավ դիտորդի կարգավիճակ: Կազմակերպության աշխարհաքաղաքական շրջանակներն ընդլայնվեցին այս անգամ ի հաշիվ Ռուսաստանի: Նշենք, որ 1990-ականներին կազմակերպությունը մեծապես ընդլայնվեց, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո նրան անդամակցեցին նորանկախ մահմեդական հանրապետությունները:

Ինչպես կլուծվի ԻԿԿ-ին Ռուսաստանի վերջնական անդամակցության հարցը, հայտնի չէ: Ի դեպ, Իսլամական կոնֆերանսի որոշ պետություններ, նախքան լիարժեք անդամ դառնալը, անցել են դիտորդի ճանապարհով: Սակայն փաստ է, որ ԻԿԿ-ին անդամակցելու

կարգը լուրջ քննարկումների առարկա է: Կազմակերպության հիմնական փաստաթղթերում նշված չէ, թե ինչ պայմաններ են հարկավոր նրան անդամակցելու համար՝ չհաշված իսլամական պետության պարագան: Միաժամանակ հստակ չէ, թե որն է իսլամական պետության չափանիշը: Առավել ընդունված է այն տեսակետը, որ անդամակցել կարող է ոչ պակաս 50 տոկոս մահմեդական բնակչություն ունեցող պետությունը: Սակայն ներկայումս անդամ երկրներից մի քանիսում (Ուզանդա, Գաբոն, Կամերուն) մահմեդական բնակչությունը փոքրամասնություն է կազմում: Բացի այդ, առանձին պետություններ իրենց սահմանադրության համաձայն՝ աշխարհիկ են, սակայն անդամակցում են կրոնաքաղաքական բնույթ ունեցող այս կազմակերպությանը:

Իսլամական կոնֆերանսի գործունեությունը Հայաստանի համար նույնպես կարելի է նշանակություն ունի: Ինչպես հայտնի է, 1992-ից ի վեր ԻԿԿ-ն խիստ կողմնապահ դիրքերից է անդրադառնում Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: 2005թ. հունիսին Սանայի հանդիպմանը վերստին դատապարտվեց «Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեյջանի Հանրապետության ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ շարունակվող ագրեսիան, ինչը կոպտորեն խախտում է ՄԱԿ կանոնադրությունն ու միջազգային օրենքը»: Այդ հանդիպմանն ընդունված փաստաթղթում նշված է, որ հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու Ադրբեյջանի գործադրած ջանքերը խոչընդոտվում են Հայաստանի՝ Ադրբեյջանի գրավյալ տարածքներում անօրինական գործունեություն ծավալելով, ինչի ապացույցն է այդ շրջանները հայերով բնակեցնելը, արհեստական կերպով աշխարհագրական, մշակութային եւ ժողովրդագրական փոփոխություններ կատարելը, գրավյալ տարածքներում ապօրինաբար տնտեսական գործունեությամբ զբաղվելը եւ բնական ռեսուրսների շահագործումը: Կոնֆերանսը կոչ արեց անդամ երկրներին՝ շարունակել համերաշխությունն ադրբեյջանական ժողովրդի հետ եւ աջակցել սեփական ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը վերականգնելու նրա ջանքերին:

Ակնհայտ է, որ Իսլամական կոնֆերանսը չունի հակամարտության կարգավորման սեփական հայեցակարգ եւ հիմնականում առաջնորդվում է իսլամական համերաշխության սկզբունքով: Միաժամանակ, պետք է նշել այս հարցում առկա դիրքորոշման առանձնահատկությունը. առ այսօր Իսլամական կոնֆերանսը որեւէ գործնական քայլ չի

ձեռնարկել նախկինում իր ընդունած որոշումները կյանքի կոչելու ուղղությամբ եւ, որպես կանոն, Ադրբեջանին կոչ է արել հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով:

Առաջիկայում (նոյեմբերին) նախատեսվում է ԻԿԿ XI գագաթաժողովը, որ պետք է տեղի ունենա Մեքքայում: Ենթադրվում է, որ կազմակերպությունը կարող է հանդես գալ նոր հարցադրումներով:

Չնայած ներկայիս միտումներին, Իսլամական կոնֆերանսի որդեգրած շատ սկզբունքներ շարունակում են հռչակագրային բնույթ կրել, ինչին նպաստում են նաեւ մահմեդական պետությունների միջեւ առկա քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարական եւ էթնոդավանական տարբերությունները:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ	1
Թամարա Վարդանյան	
ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	2
Նիկոլ Աղբալեան	
ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԱԶԳԻ ԵՒ ԴԱԲԱՆԱՆՔԻ ՄԱՍԻՆ	8
Գագիկ Տեր-Հարությունյան	
ՌՈՒՄԱՍՏԱՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ	15
Ռուբեն Սաֆրաստյան	
ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՐՔԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ.	
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԵՐ	21
Գագիկ Տերտերյան	
ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ	29
Դավիթ Հովհաննիսյան	
ՊԱՅՔԱՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ	
ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ	33
Սուրեն Սարյան	
ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ	
«ԱԶԱՏ ՄԱՅՐՈՒԴՈՒ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	39
Արաքս Փաշայան	
ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ	44

*Շապիկի վրա պատկերված է
Տաթևի վանքը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: